

18054

ՀԵՆ. ՄԻԿԻԱՆԻՍՏԻՆԻ

ԻՆՏԵՐ

Ե

ԿԱՏԱՐԱԿԱՆ

ՅԵՐԵՐԱՆԻՍՏԻՆԻ

ՊԵՏԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՂԱՆ • 1938

327


Ա-29



27 SEP 2000

4-29

327(4)




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, ՄԻԱՅՆԻՔ

15 JAN 2010

ՅԵ. ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎ

# ԻՆՉ Ե ԿԱՏԱՐՎՈՒՄ ՅԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Միջազգային տեսություն







43502.63

Я. АЛЕКСАНДРОВ  
ЧТО ПРОИСХОДИТ В ЕВРОПЕ?

Армгиз—Издательство  
полит. литературы  
Ереван—1938

## ԼՈՆԴՈՆԻՑ ՏՐՎԱԾ ԶԱՐԿԸ

Հետպատերազմյան կապիտալիստական Յեվրոպան կրիտիկական ուրեր ե ապրում: Հաշտության պայմանադրերով սահմանված կարգը լիակատար խորտակման յենթարկվեց: Բուրժուական դիպլոմատիան սնանկացավ: Կապիտալիզմի ամենասոսնձարձակ, ամենառեակցիոն ուժերը մոլեգնում են Յեվրոպայի կենտրոնում, իսկ այն պետութիւնները, վորոնք դեռևս պահպանել են բուրժուա-դեմոկրատական կարգի մնացորդները, Փաշիստական ագրեսորների հանդեպ կապիտուլացիայի յեն յենթարկվում:

Յեթե չհայտարարված պատերազմը դեռևս վերջերս ծավալվում եր Յեվրոպայի հարավ-արևմուտքում և Հեռավոր Արեւելքում, ապա վերջին ժամանակներս վտանգ առաջացավ, թե ագրեսորները ռազմական յելույթ կունենան միանգամից Յեվրոպայի միջանի կետերում: Այսպիսի սխտուացիա կազմվեց այն բանից հետո, յերբ գերմանական Փաշիզմը զբաղեց Ավստրիան և վոչ-յերկիմաստորեն սպառնում ե Չեխոսլովակիային:

Յեվրոպայում կատարվող վերջին դեպքերն ըմբռնելու համար դիմենք այդ դեպքերին նախորդող յերկու փաստի. 1938 թ. փետրվարին Իդենի հեռանալն Անգլիայի արտաքին գործերի մինիստրի պոստից և հենց նույն այդ ուրերին Հիտլերի յելույթը ռայխստագում:

Մեր մամուլը ճիշտ գնահատեց Իդենի հրաժարականը՝ վորպես բրիտանական արտաքին քաղաքականութիւնի ծրագրի փոփոխութիւն:

Այժմ կարելի յե ճշտորեն հաստատված համարել, վոր Փաշիստական Իտալիան ու Գերմանիան—Մուսոլինին ու Հիտլերը—վոչ-յերկիմաստորեն հասկացրին բրիտանական կառավարութիւնը, վոր իրենց հետ խաղ խաղալու և համաձայնութիւն գալու քաղաքականութիւնը, վոր սկսել ե բրիտանական կոնսերվատորների վերնախավը, հաջողութիւն կունենա Իդենի հրաժարականի դեպքում միայն: Ագրեսորների ցանկութիւնները կատարվեցին



անառարկելիորեն: Նեվիլ Չեմբերլենը, ինչպես դրում եր անգլիական ուսուցիչի մամուլը, պետական պոպուլար գործչին դոհարենք՝ Յեվրոպայում պատերազմ պատրաստող Փաշիստական յերկու դիկտատորներին անմիջական պահանջի համաձայն: Բանը, իհարկե, Իգենի անձնականի մեջ չէ, այլ առավել խորն այն պատճառների մեջ, վորոնք բնորոշվում են դեպի Փաշիստական ագրեսորներն Անգլիայի ունեցած վերաբերմունքով և անգլիական իմպերիալիզմի վոչ միայն արտաքին, այլև ներքին քաղաքականութեան մեջ տեղի ունեցած լուրջ փոփոխութիւններով:

Չեմբերլենն ու իր ռեակցիոն շրջապատը ձգտում են իրականացնելու մոնոպոլիստական կապիտալի պրոֆաշիստական խմբավորումների ծրագիրը: Չեմբերլենի կաբինետի քաղաքականութիւնը բնորոշվում է յերկու հիմնական մոմէնտներով. նախ՝ մոնոպոլիստական կապիտալի պարագլխական վերնախավի համար յեկամուտներն անարգել կերպով ստանալը և այդ նպատակով յեկամուտների գլխավոր աղբյուրը—բրիտանական իմպերիան պահպանելն ապահովելու ցանկութեամբ. յերկրորդ՝ Փաշիստական պետութիւններին ակտիվ կերպով ոգնելու, նրանց խորտակումը թույլ չտալու ձգտմամբ:

Հետապնդելով այս նպատակները, Չեմբերլենի կառավարութիւնն արտաքին քաղաքականութեան մեջ տատանումների ու զիզգազների տակտիկայից անցավ Փաշիստական ագրեսորներին հետ ուղղակի կերպով համաձայնելուն:

Սենսացիաների սիրահար բուրժուական լրագրերը պնդում էին, այն ել վո՛չ առանց հիմքի, վոր Իգենի հրաժարականը վորոշված եր Կլայվդենում՝ Աստորների կոնսերվատիվ ընտանիքի կալվածքում: Անգլիայում Կլայվդենը վոչ միայն աշխարհագրական անուն է, դա քաղաքական հասկացողութիւն է: Զուր չէ, վոր ռեակցիոն պրոֆաշիստական «Կլայվդենյան կլիկան» «անլեզալ կաբինետ» անունն է կրում: Թերեւս այստեղ չափազանցութեան վորոշ մասնիկ կա, սակայն բրիտանական արտաքին քաղաքականութեան մեջ անդրկուլիսային ինտրիգների ազդեցութիւնները միանգամայն ակնհայտ են: Պատմում են, որինակ, վոր Աստորների կլայվդենյան տանն է վորոշվել Գալիֆաքսի ուղևորութիւնը Բեռլին:

Լեդի Աստորն ինքը համայնքների պալատի անդամ է: Նրա ամուսին Վիսենտ Աստորին է պատկանում «Ուսերվեր» կոնսերվատիվ լրագիրը: Լեդի Աստորի վորդին համայնքների պալատի

անդամ է: Լեդի Աստորի ամուսնու յեղբորը՝ պառլամենտի անդամ մայոր Զոն Աստորին է պատկանում «Թայմս» լրագիրը, վորը վաղուց արդեն կամպանիա յե մղում Փաշիստական Գերմանիայի հետ մոտենալու ոգտին:

Միլիոններն Աստորների տանը իրենց համար ապաստան են դնում Յեվրոպայի Փաշիստական ռեակցիայի հետ աշխատակցելու վաղուցվա կողմնակիցները, մասնավորապես այնպիսի դեմքեր, ինչպես Փինանների մինիստր Զոն Սայմոնը. ներքին գործերի մինիստր Սամուել Խորը, վորն ամեն հնարավոր բան արեց, վորպեսզի խափանի 1935 թ. սանկցիաներն ընդդէմ Իտալիայի. «Ուսերվեր» լրագրի խմբագիր Գարվինը, մի լրագիր, վորը պաշտպանում եր Փաշիստական Գերմանիայի շահերը, և, վերջապես, պողպատի արքա Բալֆուրը, վոր չէր քողարկում իր համակրանքը դեպի Հիտլերը: Վերջերս Բալֆուրը բացարձակորեն հայտարարեց. «Մենք պարտավոր ենք ոգնել Գերմանիային զինվելու բոլլեիզմի դէմ վարելիք պաշարի համար»:

Այս կլիկայի խորհրդակցութիւններին մի անգամ չէ, վոր մասնակցութիւն է ունեցել շամպանկի արտադրող Փիրմայի նախկին կոմի—վոյաժոր, իսկ ներկայումս դերմանական արտաքին գործերի մինիստր Ռիբբենտրոպը: «Կլայվդենյան կլիկայի» մեջ է մտնում նաև Անգլիական բանկի նախագահ Մոնտեգյու Նորմանը, Շախտի անձնական բարեկամը:

Այս ռեակցիոն լորդերը, արիստոկրատ քաղաքականներն ու Փինանսական գործարարները խրախուսում են Անգլիայի արտաքին քաղաքականութեան նոր կուրսը, վոր ուղղված է դեպի աշխատակցութիւն Փաշիստական ագրեսորներին հետ, մասնավորապես՝ Փաշիստական Գերմանիայի հետ: Նրանք խաղում են անգլիական «կազուլյարները»—պառլամենտական դեմոկրատիայի դէմ դավադրութիւն սարքողների դեր:

«Կլայվդենյան կլիկան» ռեակցիայի դրոշների ներքո յե համաբոլոր բոլոր հակադեմոկրատական ուժերին՝ անկախ նրանց կուսակցական պատկանելութիւնից: Այստեղ են, գրում է «Լեյբոր Մոնտլին» 1938 թ. հունվարին.—Գարվինի տիպի մաշված ռեակցիոններն, մոալիականներ «Դեյլի Մեյլից», տորի—մինիստրներ, լեդիներ հասարակութեան վերին խավերից, Անգլիական բանկի մագնատներ, Ռիբբենտրոպի հացկատակներն ու գերմանական Փաշիստների ագենտներ, պրոֆաշիստական «լիբերալներ» ու «պացիֆիստներ», այսպես կոչված «բանվոր լորդեր»



Լուսինները, Ալլենները, Առնոլդները: Սրանք ամենքը միավորվում են ծայրահեղ ռեակցիայի հետ՝ «արդարությունն Հիտլերի համար» լողունդի ներքո:

Չեմբեռլենի ռեակցիոն կառավարութան պրոֆաշիստական կուրսն առանձնապես վորոշակիորեն արտահայտվեց Անգլիայի արտաքին քաղաքականության մեջ: Սակայն կառավարութունն իր ռեակցիոն ելույթունը մերկացրեց նաև ներքին քաղաքականության մեջ, թեկուզ և Չեմբեռլենի կարիքները ջանում է պահպանել «բարեկարգ» բուրժուական դեմոկրատիայի տեսք: Բենեք միքանի իլյուստրացիա:

Լորդ Գալիֆարնի արտաքին գործերի մինիստր նշանակելը բնորոշ է Անգլիայի արտաքին քաղաքականության վոչ միայն նոր կուրսի համար: Գալիֆարնը՝ վորպես լորդերի պալատի անդամ, չի կարող հանդես գալ համայնքների պալատում և, հետևապես, պառլամենտի առջև պատասխանատվություն չի ստանձնի իր քաղաքականության համար: Միջազգային դրության վերին աստիճանի սրվածության մոմենտին մոնոպոլիստական կապիտալի պրոֆաշիստական խմբի ռեակցիոն կլիկայի կամքով մինիստր դարձավ քաղաքական մի գործիչ, վորը չի կարող պատասխանատու լինել պառլամենտի առջև: Մինչդեռ, համաձայն անգլիական տիրահոջակ տրագիդիաների, համայնքների պալատին և պատկանում վճռական խոսքը արտաքին գործերի մինիստրության քաղաքականության բնորոշման մեջ: Յեվ յեթե Նեվիլ Չեմբեռլենը համայնքների պալատում հանդես է գալիս արտաքին քաղաքականության հարցերի առթիվ, ապա այդ վոչ թե նրա համար, վորպեսզի պաշտպանի պառլամենտի իրավունքները, այլ ընդհակառակը, վորպեսզի հնարավորություն ունենա անձամբ խափանելու ոպողիցիայի յեղութները:

Սա փոքր փաստ է, բայց սա մատնանշում է ֆաշիստական տենդենցները անգլիական ներքին քաղաքականության մեջ:

Անգլիական բուրժուազիայի ղեկավար վերնախավում տիրող պրոֆաշիստական ներքին քաղաքական տենդենցների մի այլ հետաքրքրական իլյուստրացիան էն հանդիսանում այն հնարքները, վոր կառավարական խմբավորումը գործ էր դրել, վորպեսզի թուլացնի ոպողիցիային: Յերբ անգլիական արտաքին քաղաքականության նոր կուրսի առթիվ դժգոհությունը լեյբորիստական ու լիբերալ կուսակցությունների շարքերից անցավ կոնսերվատիվ մեծամասնության շարքերը, կոնսերվատիվ կուսակցության ծայ-

րահեղ աջ շրջանները, վորոնք իրենց ձեռքին եյին պահում կուսակցական ամբողջ ապարատը, իրենց շարքերում յեղած ոպողիցիային հանդարտեցնելու համար դիմեցին յուրահատուկ արգումենտների:

Կոնսերվատիվ կուսակցության տերերը խոսվարար «յերիտասարդ կոնսերվատորներին» մոտավորապես հետևյալն եյին ներշնչում. յեթե արտաքին քաղաքականության կուրսի կապակցությամբ Չեմբեռլենի կառավարության ճգնաժամ վրա հասնի, ապա պառլամենտը կարձակվի և նոր ընտրություններ տեղի կունենան: Այդ ընտրությունների ժամանակ լեյբորիստները, անկասկած, կարող են նշանակալից մեծամասնություն ստանալ: Համենայն դեպս կասկածի յենթակա չե, վոր լեյբորիստները պառլամենտում 60 կամ 70 տեղ կհաճեն ի հաշիվ կոնսերվատորների: Այսպիսի հեռանկարի կանխատեսությամբ կոնսերվատիվ կուսակցության ղեկավարությունը բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք կառնի, վորպեսզի Չեմբեռլենի քաղաքականությունից դժգոհ կոնսերվատիվ պատգամավորները կորցնեն այդ տեղերը:

Կլայվդենի ու Սիտիի Մեֆիստոֆենները «յերիտասարդ կոնսերվատորներին» այսպես եյին սպառնում. յեթե դուք Չեմբեռլենի դեմ խռովություն բարձրացնեք, դուք, կարող ե պատահել, կառավարության ճգնաժամ կառավարենք, սակայն դրա փոխարեն կկորցնեք պառլամենտի ձեր տեղերը:

Այս փաստարկներն, ըստ յերևութին, գոնե տվյալ ետապում, վորոշ դեր խաղացին:

Հրաժարական տված Իդենն ամենևին էլ խաղաղության մարտիկ, կոլեկտիվ անվտանգության հետևողական պաշտպան չի հանդիսանում: Իդենը, վոր անգլիական յերիտասարդ կոնսերվատորների խմբի ներկայացուցիչներից մեկն էր, արտաքին քաղաքականության մեջ ամբողջովին յեննում էր անգլիական բուրժուազիայի շահերից և վոչ պակաս, քան Նեվիլ Չեմբեռլենը, մտահոգված էր բրիտանական իմպերիալիզմի շահերի պաշտպանությամբ զաղույթներում ու դոմինիոններում: Իդենը վարում էր տատանվող, բավականին վոչ-հետևողական քաղաքականություն, նա իսպանական գործերին չմիջամտելու խայտառակ կոմեդիայի կաղմակերպիչներից մեկն էր: Սակայն նա ներկայացնում էր անգլիական բուրժուազիայի այն մասի հայացքները, վորը գտնում է, վոր Անգլիայի ազգային շահերը ներկա պայմաններում համընկնում են խաղաղության շահերի հետ, և առարկում էր Հիտ-



լերի ու Մուսուլինիի հետ ուղղակի կապիտուլանտական համա-  
ձայնութեան գալու քաղաքականութեան դեմ: Իդենի քաղաքակա-  
նութեանն անընդունելի դուրս յեկավ Անգլիայի կառավարող  
ոեակցիոն շրջանների համար:

Վոչ միայն անգլիական, այլև միջազգային խոշոր մոնոպոլ  
տրեստների հետ սերտորեն կապված Փաշխտացող լորդերն ու  
բորսային գործարարները վճռեցին համաձայնութեան գալ Փաշխ-  
տական ուժերի հետ Յեմբրուպոլմ, Փաշխտական ագրեսորներին  
ուղղակի խրախուսել՝ ինչ խաբեյութեան և անգլիական ժողո-  
վրդի կամքի վրա գործադրվող ինչ բռնութեան գնով ել վոր  
լինի: Դրանից ավելին՝ բրիտանական կոնսերվատորները բավա-  
կան ակտիվորեն փորձում են խախտել Փրանսական ժողովրդի  
կամքը: Կասկածի յենթակա չէ, վոր Նեվիլ Չեմբերլենի խումբը  
յեռանդուն մասնակցութեան է ցուցաբերում Փրանսական ոեակ-  
ցիայի պայքարին ընդդէմ ժողովրդական Փրոնտի: Արդեն վաղուց  
հայտնի յէ, վոր Փրանսական Փրանկի տատանումներն ու նրա  
կուրսի անկումը, վոր ամեն անգամ վրա յէ հասնում, յերբ ժո-  
ղովրդական Փրոնտի վրա հենվող կուսակցութեանն անցնում է  
իշխանութեան գլուխ կամ անց է կացնում ժողովրդական Փրոնտի  
քաղաքականութեան, հանդիսանում են վոչ միայն Փրանսական,  
այլև անգլիական Ֆինանսական շրջանների հանցագործ խաղի  
հետեանք:

Փրանսական ոեակցիայի ներկայացուցիչները ժողովրդական  
Փրոնտի դեմ մղած իրենց պայքարում լայն աջակցութեան են  
ստանում Լոնդոնի Սիտիի կողմից: Վերջին ժամանակներս բրի-  
տանական կոնսերվատորները Փրանսական ներքին քաղաքակա-  
նութեանն իրենց չխառնվելու մեջ ե'լ ավելի հեռու գնացին: Չեմ-  
բերլենի կոնսերվատիվ կառավարութեանը զանազան միջոցներ  
օգնութեամբ—սկսած Ֆինանսական ճնշումից ընդհուպ մինչև Փա-  
րիզ եմիսարներ ուղարկելը—ձգտում է Փրանսիայում այնպիսի  
կառավարութեան կազմելուն, վորը կախում չունենա ժողո-  
վրդական Փրոնտից, այսինքն՝ Փրանսական ժողովրդի կամքից:

Բլյումի կարինտի անկումն ուղղակի հետեանք եր ոեակ-  
ցիայի նկրտումներին: Բլյումը հրաժարական տվեց այն պատճա-  
ռով, վոր սենատը, վորը Փրանսական ժողովրդի կամքը չէր  
արտահայտում, ձախողեց նրա Ֆինանսական օրինագծերի անց-  
կացումը:

Բլյումի կառավարութեանը փոխարինելու յեկավ Դալադեյի

կարիները, սակայն այնուամենայնիվ անորոշ է մնում, թէ ինչ  
չափով այդ կարիները կբավարարի Փրանսական ոեակցիային ու  
նրա լոնդոնյան դաշնակիցներին: Բրիտանական կոնսերվատորնե-  
րը կուղենային, վորպեսզի Փրանսական կառավարութեանը վերջ-  
նականապես հեռանար ժողովրդական Փրոնտի քաղաքականութեան-  
նից, կոնկրետիվ անվտանգութեան քաղաքականութեանից, վորով  
ծայրահեղ կերպով չահագորդված է Փրանսիան, և անվերապա-  
հորեն նպաստեր՝ պատերազմի հրձիգների հետ համաձայնութեան  
գալու բրիտանական քաղաքականութեանը:

Բրիտանական իմպերիայի բախտը տնորինողները, պատե-  
րազմի Փաշխտ կազմակերպիչների հետ համաձայնութեան գալով,  
բռնանում են իրենց ժողովրդի կամքի վրա և ուղում են Փրան-  
սական ժողովրդի վտանգ ու ձեռքը կապել: Այս տակտիկան  
բղիտում է իտալական ու գերմանական Փաշիզմի հետ համաձայ-  
նելու քաղաքականութեան հենց ելութեանից:

Փաշիզմը—դա ժողովրդի ամենավտխերիմ թշնամին է: Յեթե  
յեմբրուպոլման վորեն յերկրի կառավարութեան համաձայնութեան  
է գալիս պատերազմի, բարբարոսութեան և խավարամոլութեան  
Փաշխտական ուժերի հետ, ապա նա անխուսափելիորեն կանգ-  
նում է իր յերկրի Փաշիզացման ուղու վրա, իր ժողովրդի շահե-  
րին դավաճանելու ուղու վրա:

## ԻՆՏԵՐՎԵՆՅՈՒՆ ԻՍՊԱՆԻԱՅՈՒՄ

Այսպիսով, բրիտանական կոնսերվատորները նոր դարկ տվին  
ագրեսիայի ակտերին Յեմբրուպոլմ: Կարևորագույն հետեանք-  
ները—իտալո-գերմանական ինտերվենցիայի հսկայական ուժեղա-  
ցումը Իսպանիայում, Ալստրիայի գրավումը Գերմանիայի կող-  
մից, Գերմանիայի ճնշում գործ դնելը Չեխոսլովակիայի վրա և  
Լիտվայի լեհական շանտաժը:

Անգլիական կառավարութեան կուրսը փոխվելուց անմիջապես  
հետո Հիտլերն ու Մուսուլինին Իսպանիա փոխադրեցին հսկայա-  
կան տեխնիկական ուժեր, մոտորացված դիվիզիա, ավիացիա և  
լուրջ հարձակում ծավալեցին արագոնյան Փրոնտի վրա, ձգտե-  
լով ճեղքել—անցնել դեպի Միջերկրականի ծովեզերքը, Կատալո-  
նիան կտրել հանրապետական Իսպանիայի մնացած մասից և Լե-  
րիդայի վրա կատարելիք միաժամանակյա հարձակմամբ Կատա-  
լոնիան ծունկի բերել: Ոռովարարներին ու ինտերվենտներին հա-



Ջողվեց դրավել Վինաբուր և կտրել Կատալոնիան հանրապետական Իսպանիայի մնացած մասի հետ միացնող յերկաթուղային ու խճուղային ճանապարհները: Մակայն նրանց չհաջողվեց կտրել Կատալոնիայի դիմադրութունը, չնայելով այն բանին, վոր դեպի Կատալոնիայի մայրաքաղաք Բարսելոնան տանող ուղղության վրա գտնված բոլոր խոշոր քաղաքներն ու բնակավայրերը (Փրադա, Լերիդա, Գանգես, Տորտոսա և Մորելյա) ֆաշիստների հրետանու և ավիացիայի կողմից վերածված են ավերակների մի կույտի, իսկ Բարսելոնան յենթարկվում է ամենակատաղի ուժակոծութուններին: Իսպանական Ժողովրդի դեմ են նետված ուղղմական խոշորագույն ուժեր և իմպերիալիստական յերկու պետութուններ՝ Գերմանիայի և Իտալիայի ամենաժամանակակից ուղղմական տեխնիկան:

Կատալի ինտերվենցիայի այս սանձարձակութունն ամենևին ել չի վրդովում բրիտանական քաղաքականության ղեկավարներին: Ընդհակառակը, նրանք կեղծավորաբար հայտարարում են, թե իրենց վոչինչ հայտնի չեն Իսպանիայի քաղաքացիական պատերազմին Գերմանիայի և Իտալիայի կողմից ցուցաբերած միջամտության մասին:

Բրիտանական կոնսերվատորները վոչ միայն վարում են «չմիջամտելու» դավաճանական քաղաքականութուն, վորը ֆաշիստներին հնարավորութուն է տալիս ինտերվենցիա ծավալել Իսպանիայում և մի թևից ել սպառնալ անգլիական դաշնակցին— Ֆրանսիային: Բոլոր հիմքերը կան յենթադրելու, վոր բրիտանական կառավարական շրջանները այժմ ամբողջութամբ կողմնորոշվում են դեպի Ֆրանկոյի հաղթանակը:

Այսպիսի քաղաքականութուն անցկացնելով, Նեվիլ Չեմբերլենն ու իր կոլեգաները միխթարվում են այն միամիտ նկատառումներով, թե իբր Ֆրանկոյի հաղթանակից հետո իրենց կհաջողվի գերմանական ու իտալական զորքերը հետ կանչել Իսպանիայից: Լոնդոնյան Սիտին հույսը դնում է այն բանի վրա, վոր գեներալ Ֆրանկոն կհրապուրվի անգլիական դրամապարկերով: Ըստ յերևութին, այդ է պատճառը, վոր այնպիսի կոնսերվատիվ քաղաքագետներ, ինչպես, որինակ, Պեյլ Կրոֆորդ, անգլիական բանկերի թելադրանքով Ֆրանկոյին անվանում են «իր խոսքին տեր քաջ թրիստոնյա և ջենտլմեն»: Պետական դավաճանի, ծախվող գեներալի, հարբեցողի, Հոռմի ու Բեռլինի անմիջական ազենտի հասցեյին ասված այս կոմպլիմենտները պետք

է դիտել վոչպես պրիմիտիվ ոեկլամ՝ արված յոնդոնյան բանկերի կողմից գեներալ Ֆրանկոյին, վորին նրանք ցանկանում են փոխ տալ անգլիական ավանդատուների դրամները:

Գեներալ Ֆրանկոյին, իհարկե, կարելի չէ գնել: Այս «քաջ թրիստոնյան ու ջենտլմենը» պատրաստ է դրամ վերցնել ամենքից, ով կտա: Մակայն ի՞նչ հիմքեր կան յենթադրելու, թե Գերմանիան ու Իտալիան հաշվի կառնեն Սիտիի կողմից գեներալ Ֆրանկոյի վրա կատարած դրամական ծախսումներն ու կհրաժարվեն Պիրենեյան թերակղզու վրա դրաված իրենց դիրքերից:

1937 թվականի հունվարին Մուսոլինին ջենտլմենական համաձայնութուն կնքեց Անգլիայի հետ՝ Միջերկրական ծովի արևմտյան մասում զոյութուն ունեցող դրությունը պահպանելու մասին, և հենց անմիջապես դրանից հետո իսպանական նավահանգիստ Կադիքսում 10-հազարանոց իտալական դեսանտ ափ իջեցվեց: Հիտլերը խոստացել էր պահպանել Լոկարնոյի դաշնագիրը, սակայն շատ շուտ խախտեց այն, զորքեր մտցնելով Հռենոսի ապառազմականացված զոնան: Գերմանիան ապահովեց Ավստրիայի անկախությունը և դրանից անմիջապես հետո իր զորքերով Ավստրիան ոկկուպացիայի յենթարկեց:

Յեթե ֆաշիստներն այդպես հեշտությամբ խախտում են իրենց զորքերն ուրիշի հողը չմտցնելու իրենց խոստումը, ապա ի՞նչ հիմքեր կան յենթադրելու, վոր նրանք վորեն յերկրից հետ կկանչեն իրենց զորքերը, յեթե նույնիսկ տան ել այդպիսի պատավորութուն:

Հույս գնել այն բանի վրա, թե Պիրենեյան թերակղզու վրա հաղթանակ տանելու դեպքում Գերմանիան ու Իտալիան կմաքեն իրենց դրաված տերիտորիան,—դատարկ իլյուզիաներ ու ցինիկ խաբեյութուն է: Այդ իլյուզիաներին հակամետ չեն նույնիսկ Ֆրանսական այն քաղաքագետները, վորոնք այնպիսի պատրաստականությամբ գլխով հավանության շարժումներ են անում, ունկնդրելով Լոնդոնից արվող խրատներին:

Ավստրիայի դրավումն ու Իսպանիայում ստեղծված դրությունը Ֆրանսական դիպլոմատիային դրդեցին Լոնդոնի առջև դնելու մի շարք փափկանկատ հարցեր: Ֆրանսական բուրժուական քաղաքագետները մոտավորապես այսպես են ձևակերպում իրենց հայեցակետը անգլիացիների հետ վարած բանակցություններում. այժմ հարցը նրանում չէ, թե Ֆրանկոն կհաղթի, թե վոչ, այլ նրանում, վոր Ֆրանսիայի արևմուտքում, Պիրենեյան



լեռները մոտ, ստեղծվում է գերմանո-իտալական մի բուռն ցածր մինչև վերջին ժամանակներս մենք կարծում էյինք, վոր մի առանձին դժբախտություն չի լինի, յեթե Ֆրանկոն հաղթի, վորովհետև այնքան ել շատ չենք համակրում հանրապետական Իտալանիային, սակայն այժմ, յերբ Գերմանիան սպառնում է բռնապետական Չեխոսլովակիան, վերին աստիճանի վտանգավոր է գերմանո-իտալական ինտերվենտների հաղթանակն Իսպանիայում:

Այս կերպ դատելով, Ֆրանսական քաղաքագետներն ու զլխավոր շտաբը, կարող է պատահել, առաջին հերթին արտահայտում են վերին աստիճանի վորոշակի ցանկություններ: Թե ինչի մասին է խոսքը, կարելի չէ դատել ըստ Ֆրանսական առավել լուրջ քաղաքական գործիչների հրապարակած միջանկարաձայնությունների: Այսպես, որինակ, Ֆրանսական զենե-րալ Արմանդոն «Երոպ Նովել» ժուռնալում (ընթացիկ տարվա մարտի 26-ի համարում) գրում էր հետևյալը.

«Կարող ենք արդյոք մենք հույս դնել խոստումների վրա, յերբ քիչ առաջիկա զեպքերը մեզ նորից ցույց տվին, թե ինչ արժեն միջազգային պարտավորությունները: Միայն ունի յե-րաշխիքները գին ունեն: Մինչդեռ, Իսպանիայում գտնվում է 600-ից մինչև 700 ժամանակակից ոտարեկրկյա ինքնաթիռ և մոտավորապես զենքի բոլոր տեսակների 75 հազ. զինվոր: Հարկավոր չէ՞ արդյոք նախորդ նախապատրաստել Մետրկա կղզու և Ալիկանտե ու Կարթագեն նավահանգիստների ուղեկազմի համար Ֆրանսական ուժերի կողմից, նախապես համաձայնեցնելով այս Ֆրանսական ուժերի կառավարության հետ և, յեթե հնարավոր է, հարցը Բարսելոնի կառավարության հետ: Այս միջոցառումը մեզ հա-նաև Բուրգոսի կառավարության հետ: Այս միջոցառումը մեզ հա-մար կապահովեր կապը Որանտի ու Ալթիի հետ (այսինքն՝ Ֆրանսիայի աֆրիկական դաշնակիցների հետ), մինչև վոր իտալա-ցիներն ու գերմանացիները բարեհաճեն թողնել Իսպանիան: Այս միջոցառումը կունենար նաև այն լրացուցիչ առավելությունը, վոր նա կըժվարացներ քաղաքացիական բնակչությանը ուժակո-ծելը: Սակայն խոսք կարող է լինել միմիայն Ֆրանկո-անգլիական միատեղ ուղեկազմի մասին: Մեր դաշնակցի (Անգլիայի) կա-րևորագույն շահերը թելադրում են, վոր մեզ համար անհրաժեշտ է ապահովել 125-հազարանոց բանակի փոխադրության հնարա-վորությունը, վորը ներկայումս գտնվում է մեր Հյուսիսային Աֆրիկայում, ինչպես նաև Միջերկրական ծովի միջին-արևելյան մասի հետ մեր ունենալիք կապի ապահովությունը: Մեր դաշ-

նակցի համար, ինչպես նաև մեզ համար, հասել է «Հոռո-հեռ-լին առանցքի»՝ կողմից կատարվող շրջապատման մանյովրների հանգիստ, սակայն կանխատես, արի և իրական քաղաքականու-թյամբ պատասխանելու մոմենտը»:

Այսպիսին են Ֆրանսական զենեքալի դատողությունները: Մենք կանգ չենք առնում նրա առաջարկների ելության վրա—դա առանձին և տվյալ զեպքում վճռողական նշանակություն չունե-ցող հարց է: Կարևոր է, վոր Ֆրանսական ռազմական շրջաննե-րը հասկանում են (և ինչպես չհասկանան), վոր ստեղծված դրությունը պահանջում է վճռական ու պրակտիկ միջոցառում-ներ Ֆրանսիայի ամենամոխիջական շահերի պահպանության հա-մար:

Սակայն յեթե զենեքալ Արմանդոյի դատողություններում կա առողջ միտք, ապա միևնույն ժամանակ նրանց մեջ իր արտացո-լումն է գտել Ֆրանսական քաղաքականության նաև թուլություն-ը: Գենեքալը պնդում է այն բանի վրա, վոր Իսպանիայում կա-տարվող իտալո-գերմանական ինտերվենցիայի դեմ ձեռնարկելիք յուրաքանչյուր միջոցառում պետք է պարտադրաբար անցկացվի Անգլիայի հետ միատեղ: Սակայն, ինչպես հայտնի յե, անգլիա-կան կառավարությունը ամենևին էլ մտադիր չէ պաշտպանել իր դաշնակցին ընդդեմ նրա թշնամիների:

Յեկրոպայում ստեղծված միջազգային բարդ իրադրության մեջ նոր ուժով է դրսևորվում հանրապետական հերոսական Իս-պանիայի՝ Փաշիզմի դեմ մարտնչողի, հանուն խաղաղության, հանուն ամբողջ պրոգրեսիվ մարդկության գործի մարտնչողի դերը:

Ուռվարարներն ու ինտերվենտները չընկճեցին հանրապետա-կանների արիությունը, պայքարելու նրանց կամքը և հաղթանա-կի հավատը: Հանրապետության պաշտպանունակությունը որ-որի վրա ուժեղանում է շնորհիվ հանրապետական կառավարու-թյան ու բանակի վերակազմությանը:

Փաշիստներին հաջողվում է առաջ շարժվել կատաղի մարտե-րի և խոշորագույն կորուստների հետևանքով միայն: Այն վա-րերի բնակչությունը, ուր վրտք են կոխում ինտերվենտները, դե-մոնստրատիվ կերպով հեռանում են դեպի հանրապետական տե-րիտորիա:

Դեպի Փաշիստները տածած ատելություն մասին և կռիվը շարունակելու անչեղ ձգտման մասին խոսում է հետևյալ փա-



տը. հանրապետական 5640 մարտիկ արեւելյան ֆրոնտում տեղի ունեցած մարտերի ընթացքում կտրվեցին մնացած բանակից և քաղվեցին Ֆրանսիա: Ֆրանսական իշխանութիւնների կողմից կատարված հարցման ժամանակ 5400 մարդ ցանկութիւն հայտնեցին վերադառնալ հանրապետական բանակը՝ կռիվը շարունակելու համար:

Հանրապետութեան ամբողջ բնակչութիւնը ձգտում է գնալ ֆրոնտ, վորպեսզի կռվի ատելի թշնամու դեմ: Դժվարութիւններ են առաջանում այս կամավորներին սպառազինելու վերաբերմամբ միայն:

Հանրապետական կառավարութիւնը անգլիական ու ֆրանսական կառավարութիւններից վճռականորեն պահանջեց վերջ տալ չմիջամտելու կոմերիային և հանրապետական որինական կառավարութեանը հնարավորութիւն ընձեռել զենելու անհրաժեշտ գէնքը: Ժողովրդական ամենալայն մասսաներն Անգլիայում ու Ֆրանսիայում վճռականորեն պաշտպանում են հանրապետական Իսպանիայի այս արդարացի պահանջը: Ամենամոտ ապագան ցույց կտա, թե այս յերկրների հասարակական կարծիքին կհաջողվի՞ արդէոք ազդել Անգլիայի ու Ֆրանսիայի ղեկավար շրջանների վրա:

Համենայն դեպս, չնայած բոլոր դժվարութիւններին, հանրապետական Իսպանիան շարունակում է կռվել, վորպեսզի հաղթի՝

## ԱՎԱՏՐԻԱՅԻ ԲՈՆԱԳՐԱՎՈՒՄԸ

Յեթե Յեվրոպայի հարավ-արեւմուտքում անգլիական կառավարութեան քաղաքականութիւնը հասցրեց ֆաշիստական ինտերվենցիայի ուժեղացմանը, ապա Կենտրոնական Յեվրոպայում նրա անմիջական հետեանքը հանդիսացավ ցինիկ ազդեսիայի նոր ակտը—Ավստրիայի բռնազրավումը գերմանական ֆաշիզմի կողմից:

Փոփոխութիւն առաջ բերելով գերմանական բանակի ղեկավարութեան մեջ և նրա գլուխ կարգելով առաւել ազդեսիւորեն տրամադրված գեներալների, Հիտլերը փետրվարի 12-ին ավստրիական կանցլեր Շուշնիգին հրավիրեց իր ղեկավարներին՝ Բերլինապագային: Յերբ Շուշնիգը այս տեսակցութիւնից հետո վերադարձավ Վիեննա, յեվրոպական շատ լրագրերում հաղորդագրութիւններ յերեւան յեկան այն մասին, թե ավստրիական կանց-

լերը Ավստրիայի նկատմամբ արված հիտլերյան վտանգութիւններին հակահարված է տվել: Սա ակնհայտնի սուտ մի ինֆորմացիա չէր, վոր շրջանառութեան մեջ էր դրվել առաջին հերթին Լոնդոնից: Գերմանական ֆաշիզմի բրիտանական դործակիցները գիտակցորեն մոլորեցնում էին հասարակական կարծիքը, լուրեր տարածելով, թե Շուշնիգի վրա Հիտլերի կողմից գործ դրած ճնշումը իբր թե ձախողման հանդիպեց: Այդ «սուտը» նրա համար բաց թողին, վորպեսզի հանգստացնեն խաղաղութեան ու ազգերի անկախութեան հուզված կողմնակիցներին, ազդեսորին հնարավորութիւն տան ժամանակ շահելու: Այժմ, հասկանալի չէ, վոչ մի կասկած չկա այն բանում, վոր Բերլինապագայինում տեղի ունեցած տեսակցութիւնը կանխորոշեց Ավստրիայի ռազմական ոկիւպացիան: Արդեն իսկ Բերլինապագայինում տեղի ունեցած տեսակցութեան ժամանակ Շուշնիգը, վորը ներկայումս գտնվում է կալանքի տակ, գերմանական կառավարութեան ժամանակավոր գերին էր:

Փարիզում հրատարակվող գերմանական «Փարիզեր ցայտունը» թերթը հրապարակեց ավստրիական ֆաշիստներից մեկի միանգամայն ճշմարտանման պատմվածքն այն մասին, թե ինչպէս է տեղի ունեցել Շուշնիգի տեսակցութիւնը Հիտլերի հետ:

Յերբ Շուշնիգը իր չքախմբի հետ միասին ավտոմոբիլով հասավ գերմանական տերիտորիան, սահմանում նրան դիմավորեց Հիտլերի աղյուստանտներից մեկը, վոր գործուղված էր նրա մոտ, և վորը դուրս յեկավ Դոլֆուսի սպանութեանը մասնակից ավստրիական մի ֆաշիստ: Այս մանրամասնութիւնը պարզորեն բնութագրում է այն մթնոլորտը, վորի մեջ ընթանում էին բանակցութիւնները: Առաջին իսկ մոմենտից Շուշնիգին հասկանալ տրվեց, վոր նրան կարող է վիճակվել իր նախորդի վողբերական ճակատագիրը, յեթե նա հակառակի գերմանական շանտաժին:

Նրա պատվին տրված բանկետը իրականում վախեցնելու մի միջոց էր: Միակ հյուրերը, ըստ յերեւութին, սպաներ էին, վորոնք չքողարկված ձեռով հասկացրին Շուշնիգին, վոր իրենք յեկել են մանյովրների, սակայն կարող են անհապաղ ներխուժել Ավստրիա: Ամեն կողմից Շուշնիգին շրջապատում էին զորքեր լիակատար սպառազինութեամբ: Սակայն սա ամենին էլ պատվո պահակ չէր: Հիտլերը դրեց իր պայմանները: Յերբ Շուշնիգը փորձեց հենվել իր կառավարութեան հետ խորհրդակցելու անհրաժեշտութեան վրա, Հիտլերը ցինիկորեն նրան պա-



տառիսանեց, վոր այս անգամ նա չի կարող հույս դնել արտա-  
սահմանի ոգնության վրա: Յեւ, իրոք, իր հարցումների համար  
Շուշնիզը խոսափողական պատասխան ստացավ Անգլիայից ու  
Ֆրանսիայից:

Վերադառնալով Վիեննա, Շուշնիզն անպայման արդեն դի-  
տեր, թե ինչպիսի հետագա ընթացք կունենան դեպքերը: Նա, ի  
միջի ալլոց, այդ բանը պարտավոր էր խմանալ եւ ավելի առաջ,  
վորովհետեւ, ըստ յեւրոպական մամուլի միջանի հաղորդումնե-  
րի, դեռևս 1938 թ. հունվարին վիեննական կառավարութեանը  
նախազգուշացված էր, վոր Հիտլերը վերցնում է Ավստրիան ուղ-  
ղակի բռնադրավելու կուրս:

Վորպես նշանակալից պատմական մանրամասնութիւն, վորը  
բնորոշում է Գերմանիայի կողմից Ավստրիան բռնադրավելու ի-  
րադրութիւնը, հանդիսանում է այն փաստը, վոր այն մոմեն-  
տին, յերբ գերմանական զորքերն անցնում էին ավստրիական  
սահմանը, Փաշխտական Գերմանիայի արտաքին գործերի մի-  
նիստը Ռիրքենտրոպը գտնվում էր անգլիական պրեմիերի մոտ  
վորպես հյուր: Յերկուսն էլ, անտարակույս, գիտեին, թե ինչ  
է կատարվում Ավստրիայում:

Յեւրոպական քաղաքականութեան լոնդոնյան դիրիժորները  
փորձում էին թուլացնել այս փաստի նշանակութիւնը, սակայն  
նոյնիսկ նրանց բացատրութիւնները վերին աստիճանի ցուցա-  
նշական են: Յեւրոպական մամուլում մի հաղորդագրութիւն  
հրապարակվեց, վորի համաձայն անգլիական մինիստրի հետ  
Ռիրքենտրոպի ունեցած տեսակցութեան ժամանակ անգլիական  
մինիստրը վորպես թե անհանգստութիւն է արտահայտել Ավս-  
տրիայի վրա կախված սպառնալիքի առթիւ: Սակայն Ռիրքեն-  
տրոպն իրը թե հանգստացրել է իր անգլիական բարեկամներին:  
Նա վրջ միայն նրանց հավաստիացրել է, վոր յերկյուղը հիմ-  
նավորված չէ, այլև նրանց առաջարկել է միանալ Բեռլինի հետ  
հեռախոսով՝ համոզվելու համար, վոր գերմանական կառավա-  
րութեան մտադրութիւնները մաքուր ու անմեղ են:

Արտաքին գործերի անգլիական մինիստրը ավելորդ համա-  
րեց ստուգել Ռիրքենտրոպի խոսքերը և շտապեց հավատացնել  
ավստրիական կանցլերին, վոր նա կարող է յերկյուղ չկրել գեր-  
մանական զորքերի ներխուժման առթիւ: Դաւաճանական այս  
խորհուրդը լորդ Գալիֆաքսը տվեց ցերեկվա ժամը 4-ին, իսկ  
յերեկոյան ժամը 9-ին Լոնդոնում հայտնի դարձավ, վոր գերմա-

նական զորքերն արդեն գտնվում են Ավստրիայի տերիտորիա-  
յում:

Այս հաղորդագրութիւնները նպատակ ունեցին արգարաց-  
նելու Չեմբեռլենի ու Գալիֆաքսի վարքագիծը, թեև դժվար չէ  
հասկանալ, վոր այդ հաղորդագրութիւններն ինքնին բավարար  
հանցանշան են ծառայում, վոր հաստատում է անգլիական մի-  
նիստրների ու Փաշխտական զավթողների ընկերակցութիւնը:  
Մանավանդ վոր Չեմբեռլենն ու Գալիֆաքսը կարիք էլ չունե-  
ցին Ռիրքենտրոպի կողմից արվող հանգստացուցիչ հավաստիա-  
ցումների կոմեդիային, քանի վոր նախորդ ամեն բանի տեղյակ  
էին և Գերմանիայի կողմից Ավստրիան բռնադրավելու պլանը  
որհնել էին:

Այն յերեք ուլտիմատումները, վոր Հիտլերը հաջորդաբար  
ներկայացրել էր ավստրիական կառավարութեանը, ամենամա-  
քուր տեսակի պրովոկացիա էին: Զուր չէր, վոր մեկ պահանջը  
բավարարելուն անմիջապես հետևում էր մյուսը: Վիեննայում  
հեշտութեամբ պիտի հասկանային այս ուլտիմատումների իսկա-  
կան բնույթը: Զե՞ վոր 1914 թվականի համաշխարհային պատե-  
րազմն սկսվեց այն բանից հետո, յերբ վոր արտաքին գործերի  
ավստրո-հունգարական մինիստր գրաֆ Բերխտոլդը Սերբիային  
ուլտիմատում ներկայացրեց, նախապես իմանալով, վոր այն ան-  
հնար է բավարարել:

Չնայելով ավստրիական կառավարութեան հնազանդութեա-  
նը, Հիտլերն շտապեց գերմանական զորքեր ուղարկել Ավստրիա,  
վորովհետև նա վախենում էր առաջիկա ժողովրդական քվեար-  
կութիւնից: Ավստրիայի յուրաքանչյուր բնակչի համար պարզ  
էր, վոր Հիտլերի աղենտներն իրենց սեփական ուժերով ի վի-  
ճակի չեն իշխանութիւն նվաճել կամ թեկուզ լուրջ յելույթ  
կազմակերպել ընդդէմ յերկրի անկախութեան: Գերմանիայի կող-  
մից Ավստրիան ռիկուպացիայի յենթարկելուն նախորդած որերին  
ժողովրդական ամենալայն մասսաների մեջ տիրող տրամադրու-  
թիւնների մասին վկայում են թեկուզ հենց հետևյալ փաստերը.  
ավստրիական բանվորները 48 ժամվա ընթացքում հավաքեցին  
ավելի քան 1 միլիոն ստորագրութիւն հողուտ Ավստրիայի ան-  
կախութեան ու ազատութեան: Դյուղացիական կազմակերպու-  
թիւնները համերաշխորեն արտահայտվեցին հողուտ միևնույն  
լողունքների: Տրամադրութիւնը յերկրում այնպիսին էր, վոր  
1938 թ. մարտի 13-ի համար նշանակված «հանրաքվեն», անկաս-



կած, ցույց կտար, վոր ավատրիական ժողովրդի 80%-ից վոչ-պակա մասը տրամադրված է ընդդեմ Յերրորդ կայսրությանը միանալուն:

Ինչպիսի կեղծ փաստարկումների ու դեմադողիական պրիոմ-ները ել վոր դիմելու լինեն գերմանական Փաշխտները, նրանք չեն կարող ժխտել այս փաստը: Յեթե նրանք հույս դնելու լի-նեյին այն բանի վրա, վոր ավատրիական բնակչությունը կքվե-արկի հոգուտ Գերմանիային միանալուն, ապա Բեռլինը չէր շտա-պի դորքեր ուղարկել Ավստրիա:

2<sup>6</sup> վոր ավատրիական կառավարության կազմի մեջ վորպես ներքին գործերի մինիստր մտնում էր Զեյս Ինկվարադ—Հիտլե-րի ուղղակի ագենտը: Ավստրիական Հիտլերականների կազմա-կերպությունը փաստորեն լեզալացված էր և նրանց ագիտացիան թույլատրված: Հետևապես, գերմանական Փաշխտներն իրենց ձեռքին ունեյին ամենաիրական միջոցներ, վորպեսզի կարողա-նային իրենց կողմը գրավել «Հանրաքվեյին» մասնակցողների ձայները: Այնուամենայնիվ, այդ քվեարկությունը կանխելու հա-մար Գերմանիան ամենակուպիտ, ամենաանպատկառ կերպով խախտեց ավստրիական սահմանների անձեռնմխելիությունը և Փաշխտական կոչի տակ ջախջախեց Ավստրիայի անկախություն-ը: Ի՛նչ արժեք ունի սրանից հետո ռալիստագի ընտրություն-ների ու «Հանրաքվեյի» կոմեդիան, վոր գերմանական Փաշիդ-մը ապրիլի 10-ին կազմակերպեց գրավված Ավստրիայում:

Վոր գերմանական Փաշխտներն Ավստրիան գիտում էյին վորպես մի յերկիր, վորը պետք էր գրավել, այդ մասին է խո-սում թեկուզ հենց այն փաստը, վոր Ավստրիայի տերիտորիան էյին փոխադրված շատ նշանակալից ռազմական ուժեր: 250 հա-զար մարդուց բաղկացած գերմանական մի բանակ՝ մարտական լիակատար պատրաստությամբ, առնվազն 50 հազար մարդուց կազմված դարչնագույն բանդաներով ուժեղացված, գրավեց Ավստրիան, վոր ուներ 61½ միլիոն բնակչություն: Միմիայն Վիեննա մտավ մոտորացված մեկ դիվիզիա: Ռազմական աերո-գրոմում առաջին իսկ որերին ցած իջան ավելի քան հարյուր հատ ծանր ուժակիրներ: Ոկկուպացիոն գործը 8 անգամից ավե-լի յեր գերազանցում Ավստրիայի իրեն գինված ուժերից և կազ-մում է Գերմանիայի մինչպատերազմյան ամբողջ բանակի մո-տավորապես 50%-ը:

Ավստրիայի ոկկուպացիայից հետո յերկրում ծավալվեց Փա-

շխտական հրեշային տեռոր: Սկսվեցին շուրջկալները—խուզար-կության եյին յենթարկվում թաղ թաղի հետեից, տուն տան հե-տեից, բնակարան բնակարանի հետեից: Սկսվեց մասսայական փախուստ Վիեննայից ու դավառներից: Փախուստն այնպիսի լայն չափեր ընդունեց, վոր յեվրոպական մի շարք յերկրներում և նույնիսկ ԱՄՆ-ում անց են կացվում հատուկ միջոցառումներ ավստրիական փախստականներին ոգնություն ցույց տալու հա-մար:

Միաժամանակ Վիեննայով անցավ ինքնասպանությունների ալիքը: Մարդիկ կյանքի հետ հաշիվները վերջացնում էյին ըն-տանիքների ու հարազատների հետ մեկտեղ: Շատ ինքնասպա-նություններ, վորոնց մասին հաղորդվում էր Փաշխտական մա-մուլում, իրականում ուղղակի դուրս էյին գալիս հետլերիզա-ցիայի հակառակորդների սպանություններ:

Այս իրադրության մեջ գերմանական Փաշիդմը «Ժողովրդ-դական քվեարկություն» էր բեմադրում: «Ժողովրդական քվեար-կության» անցկացման Բեռլինի լիազոր Բյուրկելը միանգամից բացեց խաղաթղթերը, յերբ իր կոչի մեջ հայտարարեց, թե այն հարցը, վոր դրվում է Ավստրիայի գերմանական բնակչության քվեարկությանը, ըստ էյության ձևակերպվում է հետևյալ կերպ. «Գերմանացի՞ յես դու արդյոք»:

Դեռևս մինչև ապրիլի 10-ի «քվեարկությունը» Ավստրիան հայտարարվեց Գերմանիայի մի մասը, ավստրիական բա-նակը մտցվեց գերմանականի կազմի մեջ, ավստրիական բա-նակի վոսկու պաշարները դուրս տարվեցին Բեռլին: Ավստրիայում թողնված չե ինքնավարության նույնիսկ յերեութականությունը: Այն յերկիրը, վոր յերբեք մտած չի յեղել Գերմանիայի կազմի մեջ, պարզապես փոխարկված է գերմանական պրովինցիայի՝ առանց իրավունքների, առանց Ֆինանսական միջոցների—Փաշի-տական պետության մնացած մասերի հետ հավասար հիմունք-ներով:

Սրանից հետո տեղի ունեցավ այսպես կոչված «Հանրա-քվեն», վորը պետք է ցույց տար, թե Ավստրիան «կամովին» միացել է Գերմանիային: Փաշխտական տեռորի, դեմադողիա-յի ու սրիկայության ապարատը տվեց Հիտլերականներին պի-տանի հետևանքները: Ավստրիայի բռնադրավումը սրբագործվեց գեստապոյի ջանքերով: Բնորոշ է, վոր նույնիսկ ոտաբերկրյա բուրժուական մամուլը լուրջ հետաքրքրություն չցուցաբերեց



գեպի գերմանական «Հանրաքվեյի» ավարտման հարցը: Բեռլինում նախապես հեղինակված թվերը վոչ վոք չի դիտում վորպես Յերրորդ կայսրութեան, իսկ առավել ևս հենց նոր բռնադրված Ավստրիայի ընտկիչների տրամադրությունները իսկական ցուցանիշ: «Վոչ վոք չի հավատա,—գրում էր Փրանսական լրագրի «Պտի փարիզյենը»,—վոր 100 ավստրիացուց միմիայն մեկը բացասական քվե տված լինի»:

Ավելի մեծ ուշադրութեան, քան թե քվեարկութեան վոչինչ չասող կեղծված թվերը, արժանի յեն այն ճառերը, վոր նախքան ձայնավորութեանն արտասանում էյին Փաշխտական դանազան պարագլուխներ: Ռայխստագում փետրվարի 21-ին Հիտլերի արտասանած ճառն արդեն, վորին մենք կանցնենք քիչ հետո, ցույց տվեց, վոր գերմանական Փաշիզմը, վայր դնելով բոլոր դեմագոգիական դիմակները, հանդես ե դալիս բացահայտ իմպերիալիստական լոզունգներով ամենացինիկ ձևով: Հենց այս բնորոշ դիժն ունեյին նաև այն ճառերը, վոր արտասանվում էյին «Հանրաքվեյի» նախորդակին, 1938 թ. ապրիլի 10-ին: Գերբերը պարծենում էր նրանով, վոր պրուսական կոչիլը յերևաց Վիեննայի փողոցներում, և չդերադանցված լիտիությամբ «Հանրաքվեյի» բեմադրությունն անվանում էր «Յեվրոպայի յերեսին հասցված հարված»:

Գերմանական Փաշխտները «Հանրաքվեն» միանգամայն ակնհայտի կերպով դիտում են վորպես նոր արտաքին-քաղաքական ավանտյուրաների համար յերակետային մոմենտ, մանավանդ վոր Ավստրիայի բախտի հարցը վորոշված էր բռնի ճանապարհով, «Հանրաքվեյից» անկախ:

Հիտլերը ցանկանում է կարճ ժամկետում Ավստրիան փոխարկել հուսալի թիկունքի, վորպեսզի սկսի ռազմական նոր ավանտյուրաներ: Սակայն այս բանը նրան դժվար թե հաջողվի: Ավստրիայի կոմկուսակցությունը ամբողջ ժողովրդի կարծիքն է արտահայտում, յերբ ասում է. «Թո՛ղ գերմանական Փաշխտներն իմանան: Թո՛ղ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը լսի: Ավստրիական ժողովուրդը յերբեք չի ճանաչի այդ ոտարերկրյա տիրապետությունը, վորը հենվում է սլինի ու տանկի վրա»: Պտարերկրյա վարձկանների կողմից կատարվող ճնշումը կհամախմբի ավստրիական ամբողջ ժողովրդին: Յեվ յեթե այսօր, չնորհիվ անգլիական կոնսերվատորների դավաճանական դերի, Հիտլերի կողմից Ավստրիայի վրա հարձակվելու համար իրադրու-

թյունը բարեհաջող հանդիսացավ, ապա արդեն վաղը միջազգային պրոլետարիատը, դեմոկրատիայի ու պրոգրեսի բոլոր ուժերը կարող կլինեն ողնել ավստրիական ժողովրդի ազատագրական պայքարին: «Շնորհիվ սեփական ուժերի և խաղաղութեան միջազգային Փրոնտի ողնութեան նորից վոգի կառնի աղատ, անկախ Ավստրիան» (Ավստրիական կոմկուսակցութեան կոչից):

## ՄԵԴԱԼԻ ՀԱՎԱՌԱԿ ՅԵՐԵՍԸ

Իսկ ինչո՞վ բացատրել, վոր Անգլիայի կառավարությունը և վորոշ չափով էլ Փրանսական կառավարությունը վարում են յերկու պետություններին շահերին ելայդչափ հակասող կապիտուլանտական քաղաքականություն՝ Փաշխտական ագրեսորների նկատմամբ:

Ձե՞ վոր շարունակում են դոյություն ունենալ անգլո-գերմանական հակասությունները, ինչպես նաև՝ անգլո-իտալականները: Ինչո՞վ բացատրել, վոր Հնայելով դրան, բրիտանական կառավարությունը տանում է աջակցութեան և նույնիսկ համաձայնութեան քաղաքականություն ագրեսորների նկատմամբ:

Գործի այս կողմի լուսաբանութեան համար անհրաժեշտ է հիշեցնել Հիտլերի փետրվարի 20-ի ճառը, վորը նախորդեց ագրեսիայի վերջին ակտերին:

Հիտլերին չհաջողվեց ճառ արտասանել Փաշխտական ռեժիմի հնգամյակի առթիվ: Նա չկարողացավ ռայխստագը դուրսբերել նշված օրը՝ 1938 թ. հունվարի 20-ին, վորովհետև ստիպված էր լուծել այն վեճը, վոր վեր էր ածվել բացահայտ պայքարի ռայխսվերի ղեկավարների և Փաշխտական կուսակցութեան վերնախմբի միջև: Յերեք չաբաթից հետո միայն Հիտլերը հնարավորություն ստացավ հրապարակել իր ղեկավարացիան: Այդ ղեկավարացիան բովանդակում էր մի շարք անկեղծ ագրեսիվ արտահայտություններ՝ արտաքին քաղաքականութեան հարցերի վերաբերմամբ:

Մինչդեռ Փաշխտները դեմագոգիական նպատակներով յերբեմն փորձում էյին թաղցնել իրենց ավազակային պլանները:

Սակայն Հիտլերի փետրվարի 20-ին արտասանած ճառում բոլոր դեմագոգիական չիսկիւկանները, «խաղաղասիրական» կեղծ հավաստիացումները բացահայտվում էյին: Նույնիսկ խոսելով Հեռավոր Արևելքում մղվող պատերազմի մասին, վորը անմիջական



առնչութիւն չունի Գերմանիայի հետ, Հիտլերը հանդես յեկաւ վորպէս անկեղծ իմպերիալիստ: Նա պահանջում էր Չինաստանի ստրկացումը և պնդում էր այն բանի վրա, վորպեսզի ճապոնական ռազմականութեանը գործողութիւնները լիակատար ազատութիւն վերապահվի Չինական հանրապետութեան վերաբերմամբ: Հիտլերն արտահայտվեց հոգուտ իմպերիալիստական գիշատիչներին միջև Չինաստանը բաժանելուն: Ինքնին հասկանալի չէ, Հիտլերն ե՛լ ավելի ագրեսիւ էր տրամադրված, յերբ գործը վերաբերում էր այն յերկրներին, վորոնց բռնադրավման մեջ Գերմանիան անմիջականորեն չահադրգուված էր: Անգուսպ ագրեսիան է բնորոշում Փաշիստական Գերմանիայի բոլոր արտաքին-քաղաքական միջոցառումները:

Սակայն սրանից ամենևին ել չի հետևում, վոր զավթողական պլանները հանդիսանում են վորպէս Փաշիստական Գերմանիայի ուժի արտացոլում: Այս բանը պետք է հաշիւ առնել, անալիզի յենթարկելով Փաշիստական ագրեսորների ու նրանց աշակերցների քաղաքականութիւնը:

Հիտլերը հանդես յեկաւ վոչ միայն զավթողական լողուններով: Նա քիչ ուշադրութիւն չնվիրեց նաև ներքին-քաղաքական հարցերին: Իր ճառի այս մասում Հիտլերը մեջ բերեց մի շարք թվեր, վորոնք պիտի վկայեյին այն մասին, վոր Գերմանիայում աճում է ռազմական արդյունաբերութիւնը: Իրոք, ռազմական արդյունաբերութիւնն է Գերմանիայում աշխատում լրիւ թափով: Սակայն այս հանրահայտ փաստով չի սպառնում ամբողջութեամբ վերցրած գերմանական եկոնոմիկայի դրութեան հարցը:

Ֆուցանչական է, վոր, թվարկելով թվերի անվերջ շարքեր, ընդհուպ մինչև ավտորուանելով փոխադրվող ուղևորների թիւը, և յուրաքանչյուր տարի Գերմանիա ուղարկվող նամակների թիւը,—Հիտլերը վոչ մի թիւ չբերեց սպառման միջոցների արտադրութեան մասին, աշխատավարձի ֆոնդի և Գերմանիայի սպառնալին բալանսի մասին:

Յեթե Հիտլերը սիրտ աներ հրապարակել տվյալներ սպառման միջոցների արտադրութեան մասին, ապա նա ստիպված կլինէր հայտնել, վոր այդ արտադրութիւնը գտնվում է 1929 ճգնաժամային թվականի մակարդակի վրա: Ըստվորում արտադրանքի մեծ մասը գնում է բանակը հայթայթելուն, մինչդեռ բնակչութիւնն այդ տարիների ընթացքում աճել է: Միայն

գամայն ակնհայտ է, վոր Փաշիստական տիրապետութեան ժամանակի ընթացքում ազգաբնակչութիւնն սպառման լայն առարկաներով ավելի վատ է մատակարարվում, քան առաջ:

Յեթե Հիտլերը մտադրվեր թվեր բերել Գերմանիայի գյուղատնտեսութեան դրութեան մասին, ապա նա պետք է խոստովանէր, վոր 1937 թվականին ցանքի տարածութիւնը 1932 թվականի համեմատութեամբ կրճատվել է մոտավորապէս մեկ միլիոն հեկտարով վոչ միայն ի հաշիւ հողերը գինւորական վարչութեանը հանձնելու (մասնավորապէս անբողբոմներ, սահմանափակ մերձ ամբողջութիւններ, ավտո-ստրադներ կառուցելու համար), այլև մանր ու միջակ գյուղացիութեան քայքայման հետևանքով:

Հիտլերն ստիպված կլինէր հայտնել յերկրի բնակչութեանը, վոր Փաշիստական դիկտատուրայի ժամանակի ընթացքում բերքատվութիւնը նշանակելիորեն ընկել է, վոր նշանակելիորեն պակսել է խոզերի ընդհանուր թիւը և վոր անասունների համաճարակն ընդունել է հրեշավոր չափեր՝ գերմանական գյուղատնտեսութեան դեգրադացիայի հետևանքով: Յեթե մենք 1932 թ. բերքը համեմատելու լինենք 1937 թ. բերքի հետ, ապա կտեսնենք, վոր հատկավոր կուլտուրաների բերքը քչացել է գրեթե 3 միլիոն տոննով:

Հիտլերը վերին աստիճանի հասկանալի պատճառով վոչ մի խոսք չստաց աշխատավարձի մասին: Ինչ թիւ էլ վոր նա բերելու լինէր, նա չէր կարողանալու գերմանական բանլորներին մոռանալ տալ, վոր նրանց ստացած նոմինալ աշխատավարձն իջեցված է, վոր նրանց բանվորական որն ավելի յերկարատե է ու ավելի ինտենսիւ, իսկ բանվոր դասակարգի դեռ յեկամուտն ամբողջութեամբ վերցրած չի գերազանցում 1933 թվականի, այսինքն ամենախորը ճգնաժամի թվականի յեկամուտին:

Հիտլերի այս մեջ չբերած թվերի մեջ ել հենց պարունակվում է Հիտլերի ավանտյուրիստական արտաքին քաղաքականութեան և Փաշիստական ագրեսորների առջև անդլիական կոնսերվատորների կապիտուլացիայի բացատրութիւնը:

Կասկածի յենթակա չէ, վոր գերմանական Փաշիզմի արտաքին-քաղաքական ավանտյուրաների մեղալի հակառակ յերեսը—դա գերմանական Փաշիզմի ներքին-քաղաքական տնտեսական ծրագրի սնանկութիւնն է, վորն սպառնում է սոցիալական խոչոր կոնֆլիկտներով: Չուր չէր, վոր Ալստրիան բռնադրավելուց անմիջապէս հետո Հիտլերն իսկույն ևեթ գերմանական ժողո-



վերջից նորից պահանջեց տրամադրել իրեն չորս տարի գերմանական տնտեսությունը կարգի բերելու համար: Նման պահանջով նա հանդես չեկավ սրանից հինգ տարի առաջ, յերբ անցավ իշխանության գլուխ: Այժմ Փաշխտական ղեկավարողը պահանջում է նոր տարեկետում:

Փաշխտական Գերմանիայի տնտեսության այն ճյուղերը, վորոնք անմիջականորեն կապված են ռադմական արդյունաբերության ու պատերազմի նախապատրաստման հետ, իրոք աշխատում են լիակատար բեռնաձուլությամբ, սակայն ամբողջությամբ վերացրած գերմանական եկոնոմիկան գտնվում է փախուղու մեջ:

Փաշխտական քաղաքականության փրկողումը սկսում է արտահայտվել նաև այն բնագավառներում, վորոնք մինչև այժմ հանդիսանում էին վորպես սպառազինման քաղաքականության անցկացման հիմնական աղբյուրներ: Արդեն իսկ 1938 թ. մարտին ռախսբանեկի նախագահ Շախտը մի ճառ արտասանեց, վորի մեջ ասաց, թե գերմանական սպառազինումների Ֆինանսավորման հիմնական աղբյուրներից մեկը՝ կարճաժամկետ վարկերն սպառված են: Նա մատնանչեց, վոր «կարճաժամկետ վարկերի զարգացումն այսուհետև չպետք է գերազանցի այն շրջանակներին, վորոնք Ֆրեյսացիայի լեն յենթարկված արտադրանքի չափերով»: Շախտի մյուս արտահայտություններից պարզ կերպով յերևում է, վոր գերմանական խոշոր արդյունաբերական շրջանները յերկյուղ են կրում, վոր չլինի թե բանը հասնի մինչև բացահայտ ինֆլացիան:

Ավելի մեծ դժվարություններ են ծագում նաև մի այլ տեղամասում, վորը կապված է սպառազինումների հարցերի հետ, — գերմանական արտաքին առևտրի բնագավառում: Արդեն իսկ 1938 թ. հունվարին Գերմանիան պատիվ բալանս ունեց: Փետրվարին առևտրական բալանսի պատիվը մեծացավ: Նախնական հանրագումարներ տալով, կարելի յե հավաստել, վոր գերմանական եքսպորտը՝ սկսած 1937 թ. հոկտեմբերից սկստեմատիկորեն ընկնում է: Այլ խոսքով, Գերմանիային սպառնում է սպառազինումները Ֆինանսավորելու՝ ինչպես ներքին, նույնպես և արտաքին աղբյուրների սպառում:

Գերմանական Փաշխտական քաղաքական ու տնտեսական փրկման ցուցանիշներից մեկն է հանդիսանում Շախտի հեռանալը Գերմանիայի ժողովրդական տնտեսության միևնույն պոստից: Շախտի հիմնական գիծը, բացի պետական պարտքերը վճարելուց խուսափելու արվեստից, հանդիսանում է ընկղմվող

չողենավը ժամանակին թողնելու ընդունակությունը: Դեռևս վաղմարյան հանրապետության ժամանակ Շախտը դրսևորեց իր ճիրքերը, դուրս դալով գեմոկրատական կուսակցությունից այն մոմենտին, յերբ կուսակցությունը գեռես բավականաչափ ուժեղ Փրակցիա ուներ ռախստագում: Շախտն իր հաշիվներին մեջ չսխալվեց. գեմոկրատական կուսակցությունն էլ ավելի առաջ քաջբայվեց, քան վաղմարյան հանրապետությունը:

Հաշվի առնելով Շախտի անձնական առանձնահատկությունները, կարելի յե վոչ առանց հիմքի յենթադրել, վոր 1938 թ. նախորդակին հիտլերյան կառավարության կազմից նրա հեռանալը հանդիսանում է վորպես ցուցանիշ Փաշխտական Գերմանիայում աճող անբարեկեցությունը:

Ե՛լ ավելի նշանակալից լուրջ ցուցանիշ է հանդիսանում գերմանական բանակի հրամանատարության ձգնաժամը, վորն արտահայտվեց ռադմական միևնույնիստի—Ֆելդմարշալ Բլոմբերգի հրաժարականով, գեներալիտետի մի շարք ականավոր ներկայացուցիչների արձակմամբ ու կալանավորմամբ, սպայական կադմի գումամբ:

Այս բոլոր փաստերը մեղ թուլատրում են պատասխանել այն հարցին, թե ինչ պատճառներ են զրդում գերմանական Փաշիզմին դեպի նորանոր արտաքին—քաղաքական ավանտյուրաներ: Մասունների աղքատացումը, դյուղատնտեսության քաջբայումը, թանդության հոկայական աճումը, համատնտեսական աշխուժացման պլանների ձախողումը, սպառազինումները Ֆինանսավորելու աղբյուրների ատոիճանարար սպառումը,—այս ամենը միասին վերցրած պայմանավորում է Փաշխտական Գերմանիայի հետդհետե աճող աղբեսիվությունը:

Հենց նույն պատճառներն ել վորպես բացատրություն են ծառայում Փաշխտական Իտալիայի արտաքին քաղաքականության ավանտյուրիստական կուրսի համար: Իտալիայի Ֆինանսական ու տնտեսական դիրքը, առանց բացառության բոլոր ոտարեկրյա գիտողների վկայության համաձայն, գտնվում է ծայր աստիճան կրիտիկական մակարդակի վրա:

Հարեչստանյան ավանտյուրան Իտալիային հսկայական զոհեր արժեցավ և վոչինչ չտվեց նրան: Հարեչստանը վերջնականապես նվաճել չհաջողվեց: Ապրանքների արտահանության պլաններից վոչինչ չստացվեց, վորովհետև մարդ չկա, վորին ծախես այդ ասպրանքները, վոչինչ չստացվեց նաև «ավելորդ» մարդկանց դաղթեցնելու պլանից: Վոչինչ չստացվեց հանածոների հանույթի



պլանից, վորովհետեւ այդ հանածոներին հասնել չհաջողվեց: Չարգարացան նաեւ Իսպանիայում արագորեն հաղթանակ տանելու հաշիվները, այն հաշիվները, թե Իսպանիայի ինտերվենցիան կծածկի հարեչական ավանտյուրայի վնասները:

Իտալիայի թուլացման ամենալավ ապացույցը հանդիսանում է այն փաստը, վոր Մուսոլինին պետք է համաձայնեւր Ալստրիայի բռնադրամանը Գերմանիայի կողմից: Դեռեւ 1934 թվականին, յերբ գերմանական Փաշիստները Ալստրիայում խռովություն սարքեցին, Մուսոլինին իր զորքերը չարժեց դեպի Բրեններ, դեպի ավստրո-իտալական սահմանը: Իսկ 1938 թվականին իտալական սահմանապահակն ստիպված եւր ստորադարձությամբ վողջունել գերմանական հափշտակիչներին:

Իտալիայի դիրքը Կենտրոնական Յեվրոպայում ներկայումս բնորոշվում է, ըստ Մուսոլինիի սեփական խոստովանության, հետեյալ կերպ. «Յեթե հնարավորություն չկա հակադէլու վորեւե դեպքի, ավելի լավ է, վոր այդ դեպքը տեղի ունենա առանց մեզ և վոչ մեր դեմ»:

Այս խոսքերը ծածկում են Իտալիայի կողմից հարավ-արեւմեյան Յեվրոպայում իր դիրքը հանձնելը, եղսպանիայի նախկին պլաններից հրաժարվելը, վոր առաջ է յեկել սեփական թուլության դիտակցությունից:

Ապրիլի սկզբին Մուսոլինիի արտասանած ճառը հանդիսացավ վորպէս իտալական Փաշիզմի ներքին-քաղաքական ու տնտեսական սնանկության նոր իլյուստրացիա: Մուսոլինին լիակատար վորոշակիությամբ հայտարարեց, վոր իտալական Փաշիզմի ամբողջ ներքին ու տնտեսական քաղաքականության միակ բովանդակությունն ու միակ նպատակը հանդիսանում է պատերազմ նախապատրաստելը:

Յեթե ուշադրությամբ դիտենք վերջերքս տեղի ունեցող անգլո-իտալական բանակցությունները, ապա դժվար չի լինի նկատել, վոր Չեմբեռլենի հետ վարած բանակցությունների մեջ Մուսոլինիի հիմնական արգումենտը—դա ինքնասպանությամբ սպառնալն է: Մուսոլինին բրիտանական կոնսերվատորներին սպառնում էր, վոր յեթե նրանք Փաշիստական Իտալիայի հետ համաձայնության չզան, ապա կա'մ ներքին-քաղաքական սնանկացումը Փաշիստական ռեժիմի փլուզում կառաջացնի, կա'մ թե Փաշիստական Իտալիան, վախենալով ներքին կատաստրոֆից, սանձալուծ կանի արտաքին-քաղաքական կատաստրոֆը:

Դեռեւ հարեչստանյան ավանտյուրայի ժամանակ, այն մոմեն-

տին, յերբ ընդդեմ Իտալիայի հայտարարվեցին տնտեսական ու ֆինանսական սանկցիաներ, կարելի չեւ նկատել նման ազդումներն արգելեցությունը բրիտանական կոնսերվատորներին վրա:

Ներկայումս Փաշիստական Իտալիայի ու Փաշիստական Գերմանիայի ներքին-քաղաքական դժվարությունները ե'լ ավելի ուժգին են դրսեւորվում: Բրիտանական կոնսերվատորներն ե'լ ավելի մեծ գիշումներ են անում Փաշիստական ազդեցութեւրին: Անգլիայի աջակցությունը Փաշիստական աճող ազդեցիկին՝ հակառակ Բրիտանական կայսրության շահերի, իր պետական շահերին դավաճանելը կատարվում է հանուն դասակարգային շահերի:

Փաշիստական ռեժիմի խորտակումը Իտալիայում ու Գերմանիայում կհասցնել այնպիսի փոփոխությունների Յեվրոպայում, վորոնք հաճելի չեյին լինի վո'չ Լեդի Աստորի, վո'չ Նեյիլ Չեմբեռլենի, վո'չ ել Կլայվիլենում հավաքվող ամբողջ կլիկայի ճաշակին: Մուսոլինին ու Հիտլերը անողոր տեւորի, դաժան շահակին, անդուսպ դեմագոգիայի և կեղտոտ խաբէյության ողնությամբ իրենց ժողովուրդներին ներգրավում են ռազմական կատաստրոֆի մեջ, միայն թե պահպանած լինեն ֆինանսական կապիտալի տիրապետությունը: Այդ իսկ նպատակին հասնելու համար բրիտանական քաղաքականության ղեկավարները չմիջամտելու անառիթ կոմեդիայի, Փաշիստական թալանին բացահայտ կերպով աջակցելու և անգլիական ժողովրդին նուրբ կերպով խաբելու միջոցով արագացնում են ռազմական կատաստրոֆի վրա հասնելը:

## ԱԳՐԵՍՈՐՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ՊԼԱՆՆԵՐԸ

Վորոնք են յեվրոպական ռեակցիոն բուրժուազիայի հանցավոր քաղաքականության հնարավոր հետևանքները: Կարելի' չեւ ընդունել, վոր Ալստրիայի գրավումը գերմանական Փաշիզմի կողմից, իտալո-գերմանական ինտերվենցիան Իսպանիայում ինքնին հանդիսանում են ինքնանպատակ: Վո'չ: Խոսքն ավելի մեծ բանի մասին է: Այն դեպքերը, վորոնք վկաներն են մենք հանդիսանում, իրենցից ներկայացնում են աշխարհի վերաբաժանման համար իմպերիալիստական նոր պատերազմ սանձալուծելու ետապներից մեկը միայն:

Բռնադրավելով Ալստրիան, Գերմանիան իր տերիտորիան



մեծացրեց գրեթե 84 հազար քառակուսի կիլոմետրով և Գերմանիայի բնակչությանը միացրեց  $6\frac{1}{2}$  միլիոն ավստրիացի: Միաժամանակ Գերմանիան յերկարացրեց իր սահմանը Չեխոսլովակիայի կողմից 500 կիլոմետրով և Շվեյցարիայի կողմից՝ 70 կիլոմետրով: Գերմանիան ձեռք բերեց նոր հարևաններ: Հարավարևելքում նա այժմ սահմանակից է Հունգարիայի հետ, հարավում՝ Հարավ-Սլավիայի հետ: Վերջապես, Գերմանիան նոր սահման ձեռք բերեց Իտալիայի կողմում: Այլ խոսքով՝ Գերմանիան ընդհուպ մոտեցավ հարավարևելյան Յուգոսլավիայի այն յերկրներին, վորոնց վրա գերմանական իմպերիալիզմը վաղուց արդեն ուղղված էր դեմը իր ձեռքը:

Ավստրիայի միացումը Գերմանիային վերջինիս բնական է միջանի վերին աստիճանի սահմանափակ տնտեսական ոգուտներ, սակայն այդ բանը կապված է տնտեսական նոր դժվարությունների հետ: Գերմանական Փաշիզմը յենթադրում է, թե ինքը կարող է լայնորեն չահագործել ավստրիական յերկաթահանքի ու քարածխի հանքաշերտերը, անտառային հարստությունները: Սակայն Ավստրիան ավելի մեծ չափով, քան թե Գերմանիան ինքը, տառապում է պարենային ռեսուրսների պակասությունով: 1936 թվականին Ավստրիան ներմուծեց ժողովրդին կերակրելու համար անհրաժեշտ ցորենի 40%-ը, բացի դրանից, անհրաժեշտ է, վոր նա արտասահմանից ներմուծի պարենավորման նաև ուրիշ առարկաներ: Ավստրիայի հանքային ու անտառային հարստությունների չահագործումը դժվարությունների յե դեմ առնում թեկուզ և այն պատճառով, վոր արդյունաբերություն մի շարք ավստրիական ճյուղեր գտնվում են ոտարեկրյա կապիտալի ձեռքերում: Մասնավորապես ավստրիական անտառային արդյունաբերությունը պատկանում է բրիտանական կապիտալին:

Վերջապես, ապրանքների արտահանումն Ավստրիայից գերմանական եկոնոմիկայի համար լուրջ նշանակություն չունի նաև այն պատճառով, վոր մինչև Ավստրիայի ոկկուպացիան ավստրիական էքսպորտի նշանակալից մասը Գերմանիան էր գնում:

Ավստրիան Գերմանիայի համար ունի վոչ այնքան ինքնարավ նշանակություն, վորքան վոր հանդիսանում է վորպես յեթակետ ագրեսիայի հետագա ակտերի համար հարավարևելյան Յուգոսլավիայում:

Գերմանական իմպերիալիստները Եքսպանսիայի լայն պլան

ունեն Բալկանյան թերակղզու և Մերձավոր Արևելքի նկատմամբ: Պատահական չէր, վոր Ռուրի ածխարդյունաբերական լրագիր «Բերգշվեբցայաուսզը» հենց նույն ուրը, յերբ գերմանական պորբերը ներխուժեցին Ավստրիայի տերիտորիան, հրապարակեց «Բեռլին—Բաղդադ» վերնագրով հոդվածը: Հոդվածը նվիրված է ոգային գծի բացմանը Բեռլինի և Բաղդադի միջև, սակայն իրականում ինքնին հանդիսանում է վորպես մի դեկլարացիա էքսպանսիայի գերմանական պլանների վերաբերյալ Մերձավոր Արևելքում: Այս պլանները հարուժյուն են տալիս մինչպատերազմյան, կայսերական Գերմանիայի նախագծերին:

Գերմանիայի կողմից ամենամեծ սպառնալիքի տակ ընկավ ներկայումս Չեխոսլովակիան, վորը Ավստրիան Գերմանիային միացնելուց հետո յերեք կողմից շրջապատված է Գերմանիայով: Չեխոսլովակյան հանրապետության նկատմամբ գերմանական Փաշիստների ունեցած զավթողական նպատակների մասին լիակատար անկեղծությունամբ գրեթե ամեն ոք պնդում են բեռլինյան լրագրերն ու Փաշիստական պարագլուխները: Հստկանալի յե, հարձակվել Չեխոսլովակիայի վրա, իսկ առավել ևս բռնազբաղել այն նշանակալից չափով ավելի ծանր է, քան Ավստրիայի բռնագրավումը: Չեխոսլովակյան ամբողջ ժողովուրդը կպաշտպանի իր անկախությունը: Չեխոսլովակիայում ստեղծված է ժամանակակից, լավ սարքավորված ամբուժյունների սիստեմ: Չեխոսլովակիան ունի պաշտպանական ուժեղ արդյունաբերություն: Այնուամենայնիվ գերմանական Փաշիզմի ագրեսիան անմիջականորեն սպառնում է Չեխոսլովակիային:

Գերմանական Փաշիզմը, մի կողմից, նախապատրաստում է անմիջական ռազմական հարձակում Չեխոսլովակիայի վրա, իսկ մյուս կողմից, ծավալում է իր քայքայիչ գործունեյությունը չեխոսլովակյան տերիտորիայի վրա: Այս քայքայիչ աշխատանքի մեջ վորպես հենակետ ծառայում է Սուդետի մարզը, վորտեղ գերակշռում է գերմանական բնակչությունը: Իրենց ագենտուրայի քայքայիչ գործունեյությունը գերմանական Փաշիստները փորձում են ջողարկել Սուդետի մարզի գերմանական բնակչության չահերի պաշտպանության դիմակով, սակայն գերմանական բնակչության դրուժյունն այս մարզում այնպիսին չէ, վոր նա կարիք ունենար գերմանական Փաշիզմի խնամակալությունը: Գերմանական փոքրամասնության դրուժյունը Չեխոսլովակիայում վոչ միայն ավելի վատ չէ, այլ նշանակալից չափով ավելի լավ



ե, քան Յեվրոպայի մյուս բուրժուական յերկրներում: Չեխոսլովակյան կառավարութեանը պրովոկացիոն պահանջներ առաջադրելով, գերմանական Փաշիստները ամենից քիչ են մտածում ուղեւորական գերմանացիների վիճակի մասին: Այս բանը նկատելի չէ թեկուզ հենց նրանից, վոր գերմանական պահանջներին ընդառաջելու չեխոսլովակյան կառավարութեան փորձերն ամենեւին ել չեն թեթեւացնում դրութեանը, վորովհետեւ գերմանական ազենատուրան Չեխոսլովակիայում լոկ ուժեղացնում է պրովոկացիաները, իսկ Բեռլինը՝ իր ճնշումը Պրագայի վրա: Այս պայմաններում առանձին մանյովներն ու գիշումները չեն կարող հեռացնել գերմանական սպառնալիքը Չեխոսլովակիայից:

Չորս չէ, վոր Փրանսական հայտնի հրապարակախոս Պերտինաքը «Եւրոպ Նուվել» ժուռնալում մարտի 26-ին գրում էր, վոր Չեխոսլովակիայի փրկութեան համար պարտադիր նախադրյալ է հանդիսանում Ֆրանսիայի ու Անգլիայի և մյուս խաղաղասեր պետութեանների միավորումը, միավորում ազբեսորներին սանձահարելու համար՝ կոնկրետ պրակտիկ գործողութեանների ոգնութեամբ:

Սակայն Գերմանիան սպառնում է վոչ միայն հարավ-արեւելյան Յեվրոպային: Անկասկած է, վոր Փաշիստական Գերմանիան նորից է դնում իր՝ արեւելյան ուղղութեամբ ունեցած ազբեստի պլանների իրականացման հարցը: Ավստրիան բռնագրավելու որերին հենց Հիտլերը անգլիական ժուռնալիստ Ուորլդ Պրայի հետ ունեցած ինտերվյուի մեջ հայտարարեց, թե իրեն «առանձին ցավ է պատճառում» այն հանգամանքը, վոր Լեհաստանը գեպի ծովը յեւջ ունի գերմանական տերիտորիայի վրայով: Այլ խոսքով, Գերմանիան ամենեւին ել չի թողել այն միտքը, վոր իրեն վերադարձնի այսպես կոչված «լեհական կորիզը» ու Դանցիգը, վորն առանց այն ել փաստորեն գտնվում է գերմանական վերահսկողութեան տակ:

Լեհական մամուլը չվերարտադրեց Հիտլերի այս հայտարարութեանը, վորովհետեւ այդ բանը ձեռնառու չէր լինի Հիտլերի ազենտի համար Լեհաստանում, վորն այնտեղ գրավում է արտաքին գործերի մինիստրի պոստը: Բեկը—Բեռլինի այդ գործակատարը—փորձեց ստեղծված իրադրութեանից այլ յեզրակացութեան անել. նա պրովոկացիայի յենթարկեց Լիտվայի հետ ունեցած կոնֆլիկտը:

Լեհ-լիտվական կոնֆլիկտը ծագեց չնորհիվ այն բանի, վոր

Լիտվայի տերիտորիան անցած լեհական զինվորը սպանվել էր լիտվական պահակի կողմից: Դրանից անմիջապես հետո լեհական սահմանապահները յերկու անգամ փորձ արին դողանալ լիտվական պահակներին, ըստվորում այդ փորձերից մեկը հաջողութեամբ պսակվեց:

Լեհ-լիտվական վեճը մեծ պատմութեան ունի: 1920 թվականին լեհական զենեքով Ժելիխովսկին, վորպես թե սեփական ձեռներեցութեամբ, բռնագրավեց Վիլնո քաղաքը, վորը լիտվական ժողովուրդը համարում է լիտվական պետութեան մայրաքաղաքը: Այս թալանչիական ակտը ի կատար էր անված լեհական պետութեան գլուխ Պիլսուդսկու ուղղակի ցուցումով: Լիտվան չհամաձայնեց ճանաչել Վիլնոյի խլումը, և 1920 թվականից սկսած Լիտվայի ու Լեհաստանի միջև խզվեցին դիվանագիտական հարաբերութեանները: Սահմանագիծը պետական սահմանի անուն չէր կրում, այլ կոչվում էր Ժամանակավոր գեմարկացիոն գիծ:

Պրովոկացիայի յենթարկելով 1938 թվականին լեհ-լիտվական այս Ժամանակավոր «գեմարկացիոն գիծ» վրա ծագած կոնֆլիկտը, Լեհաստանը Լիտվային մի ուլտիմատում ներկայացրեց, վորով պահանջում էր դիպլոմատիական նորմալ հարաբերութեաններ սահմանել Լեհաստանի ու Լիտվայի միջև: Այս պահանջն ընդունվեց Լիտվայի կողմից և լիտվական կառավարութեան, անկասկած, ճիշտ վարվեց, վորովհետեւ դիպլոմատիական հարաբերութեանների խզումը միջազգային վեճերը լուծելու նորմալ մեթոդ չի հանդիսանում:

Սակայն բանն ամենեւին ել Լեհաստանի ու Լիտվայի միջև դիպլոմատիական նորմալ հարաբերութեաններ սահմանելու մեջ չէ: Կասկածի յենթակա չէ, վոր Լեհաստանը Լիտվայի նկատմամբ նոր պրովոկացիաների առիթներ էր փնտռում և շարունակում է փնտռել: Քանի վոր Գերմանիան ձգտում է թաթը դնել այսպես կոչված «լեհական կորիզը» միջով Լեհաստանի գեպի ծով դուրս գալու ինքրի վրա, Լեհաստանը պատրաստվում է գեպի ծով թնկեջ գործել Լիտվայի ու Մեմելի վրայով: Պարոն Բեկը զավթողական պրիմներին վարժվել է հենց Բեռլինում, և այժմ նա վճռել է, ըստ յերեւութին, ցույց տալ, թե ինչի յե ընդունակ ինքն այս բնադավառում:

Յեթե միադուժարելու լինենք ազբեստիայի բոլոր վերջին ակտերը Յեվրոպայում, ապա ընդհանուր առմամբ ստացվում է մի ամբողջական, թեկուզ և քիչ դրավիչ պատկեր: Այն բանից հե-







ուանց հիմքի յենթադրում է, վոր այժմ բրիտանական կառավարութիւնից կարելի չէ ձեռք բերել ելական դիմումներ: Իրոք, անգլո-իտալական բանակցութիւններէ հանրազումարները վկայում են Անգլիայի իսկական կապիտուլացիայի մասին:

Անգլո-իտալական համաձայնութիւնը վերաբերում է վեց հիմնական հարցի: Համառոտ կերպով բնութագրենք այդ համաձայնութիւնի բովանդակութիւնը: Ամենից առաջ, Անգլիան պատրաստ է ընդունելու, վոր Իտալիան Միջերկրական ծովում «կենսական շահեր» ունի, քանի վոր Իտալիան ընդունում է, վոր Անգլիան Միջերկրական ծովում «եյական շահեր» ունի: Թեև առաջին հայացքից խոսքը կարծես թէ դիպլոմատիական ներքին թշուարների և բառախաղի մասին է, սակայն իրականում իտալական «կենսական» շահերը անգլիական «եյական» շահերին հակադրելը նշանակում է վոչ այլ ինչ, քան յետեւ Անգլիայի կողմից իտալական թեզիսն ընդունելը, այսինքն՝ յետեւ իտալական շահերը Միջերկրական ծովում մեծ կշիռ ունեն, քան անգլիականները, ապա Իտալիան բնական իրավունք ունի հավակնել առնվազն նավատորմիղների հավասարութիւն, յետեւ վոչ իր դերակշիռն անգլիական նավատորմիղի վերաբերմամբ Միջերկրական ծովում: Հիմնվելով այն բանի վրա, թէ ինքն իրավունք ունի պաշտպանելու վոչ միայն իր դերքերն Ադրիական ծովում, այլև Անգլիայի կողմից ճանաչված իր «կենսական շահերը» Միջերկրական ծովի ամբողջ ավազանում, Իտալիան կարող է հավակնել թէ՛ վերահսկելու ծովային առևտրական ճանապարհներին Միջերկրական ծովում և թէ՛ կառուցելու ծովային բազաներ այն կետերում, վորոք մինչև այժմ համարվում էին անգլիացիների իտալական սփերայից դուրս գտնվողներ: Վերջապես, Իտալիան իրավունք ունի հայտարարելու, թէ ինքը չի կարող հաշտվել այն բանի հետ, վորպեսզի Միջերկրական ծովի մուտքն ու յեղը, վորտեղ կենտրոնացած են իր «կենսական շահերը», գտնվեն Անգլիայի ձեռքին: Այստեղից բխում է ուղղակի սպառնալիք թէ՛ Ջիրբալտարին և թէ՛ անգլիական դիրքերին Սուեզի ջրանցքում:

Այնուամենայնիւ, Սուեզի ջրանցքի հարցին է նվիրված անգլո-իտալական համաձայնութիւնի յերկրորդ կետը: Յերկու կողմերն ել պարտավորվում են կատարել բոլոր պետութիւնների կողմից Սուեզի ջրանցքը ինչպես խաղաղ, նույնպես և պատերազմի ժամանակ ազատորեն ոգտագործելու վերաբերյալ կոն-

վենցիան: Յետեւ հաշվի առնենք, վոր հարեչական պատերազմի ժամանակ Անգլիան հակվում էր այն բանին, վորպեսզի փակի Սուեզի ջրանցքը իտալական նավերի համար, ապա միանշանայն ահնհայտ է, վոր Հոռմի հետ վարած վերջին բանակցութիւնների ժամանակ անգլիական կառավարութիւնն իր նախկին դիրքերից հետ նահանջեց:

Համաձայնութիւնի յերրորդ կետում Իտալիան հայտարարում է, վոր Հարավային Արաբիան ճանաչում է վորպես ազդեցութիւնի անգլիական սփերա: Սակայն Անգլիան վաղուց արդեն ամրացրել է իր դիրքերը Հարավային Արաբիայում, և Իտալիան նվիրում է Անգլիային այն, ինչ արդեն պատկանում է վերջինիս: Այս հարցի հետ կապված է համաձայնութիւնի 4-րդ կետը, վորը նախատեսում է բանակցութիւններ՝ Հարեչստանի և Տան լճի շրջանին հարող բրիտանական տիրակալութիւնների միջև ճիշտ սահմանագծեր սահմանելու նպատակով:

Անգլիան վոչ միայն ինքը ճանաչում է Հարեչստանի բռնագրավումն Իտալիայի կողմից, այլև պարտավորվում է այդ բռնագրավման ճանաչումն անցկացնել Ազգերի լիգայով: Անգլիան մի նոտայով արդեն դիմել է Ազգերի լիգային, առաջարկելով Հարեչստանի վերաբերյալ հարցը դնել Լիգայի Խորհրդի հերթական նստաշրջանի քննութիւնը:

Անգլիայի և Իտալիայի միջև կայացած համաձայնութիւնի հինգերորդ կետը նախատեսում է դադարեցնել Իտալիայի կողմից անգլիական բոլոր տերիտորիաներում, ինչպես նաև Անգլիայի վերահսկողութիւնի տակ գտնված յերկրներում մղվող հակաբրիտանական պրոպագանդան: Ինչպես հայտնի չէ, Իտալիան մինչև վերջին ժամանակներս ել վերին աստիճանի ակտիվ պրոպագանդա յեր մղում Անգլիայի դեմ Աֆրիկայի բրիտանական տիրակալութիւններում, և, անկասկած, նա լայնորեն ոգտվում էր այդ միջոցից՝ Լոնդոնի դեմ շանտաժ անելու նպատակներով: Հասնելով ցանկալի հետևանքների, Իտալիան ժամանակավորապես հրաժարվում է ճնշում գործ դնելու միջոցներից մեկի՝ դործադրութիւնից:

Իսկ ինչ վերաբերում է Իսպանիային, ապա բրիտանական դիպլոմատիան բացահայտ կերպով որհնում է Մուսոլինիին հետադալում ել պատերազմելու իսպանական ժողովրդի դեմ: Անգլիան հրաժարվեց այսպես կոչված վոյոնտյորներին—իտալական զորքերին Իսպանիայից անհատաղ կերպով հետ կանչելու իր պա-



Հանձնից: Նա բավարարվեց Մուսուլինի խոստումով՝ դորքերն Իսպանիայից դուրս տանել խռովարարներին հաղթանակից հետո միայն:

Անգլիան վոչ միայն ինքն է համաձայնություն ստորագրել Իտալիայի հետ, այլև Ֆրանսիային ել հրում է դեպի այդ ուղին: Ֆրանսական միևնույնները հենց այդ նպատակով են հրավիրված Լոնդոն, վորտեղ նրանց վրա համապատասխան ճնշում կգործադրվի: Բրիտանական կառավարությունը կուղենար ստիպել Ֆրանսիային զավաճանելու վոչ միայն հանրապետական Իսպանիայի, այլև իր սեփական շահերին:

Անգլո-իտալական համաձայնությունը վկայում է անգլիական իմպերիալիզմի կողմից Փաշիստական ազդեցություն արված նոր զիջումների մասին, և սա չնայած այն բանին, վոր պայմանավորվող կողմերի միջև ուժերի հարաբերակցությունը դասավորվում է վոչ ամենևին հոգուտ Իտալիայի: Վերջինս վոչ պատերազմում և վոչ էլ սպառազինումների վաղընում յերբեք չեր կարողանա զիմանալ Մեծ բրիտանիայի մրցությունը:

Անգլո-իտալական համաձայնության հետևն արգեն սկսվում է պատկերվել տխրահույս «չորսի պակտի» կամ, ինչպես վոմանք ասում են, «հնգի պակտի» ստվերը՝ Լեհաստանի մասնակցությամբ: Իսպանական հանրապետությունը խեղդելու գնով, նույնպես և Ֆրանսական շահերի բացահայտ խախտման գնով բրիտանական դիպլոմատիան փորձում է կյանքի կոչել ինչ-վոր «տերությունների համերգ», վոր դար փոխարինելու կուլեկտիվ անվտանգության սխոտեմին՝ Ազգերի լիգայի շրջանակներում:

Անգլիան հույս ունի զիջումների միջոցով համաձայնության գալ ազդեցությունների հետ, հարվածը հեռացնել իրենից: Անգլիայի կողմից արվող այդ բոլոր զիջումները վորեւ միտք կարող էին ունենալ, յեթե Անգլիան, Յեվրոպային հեղեղի բերան տալով և հանձնելով Փաշիստական ազդեցությունների կողոպտմանը, կարողանար հույս ունենալ, վոր ինքը ռազմական ցնցումներից մի կողմ կմնա: Այս դեպքում մենք գործ կունենայինք ցինիկ, շահամուլ, իսկական պնդաճակատ դիրքի հետ, սակայն այնուամենայնիվ մի այնպիսի դիրքի, վոր զուրկ չէ հեռեկողականությունից ու տրամաբանական լինելուց: Սակայն բրիտանական քաղաքականությունն անկախ չէ իրենից: Սակայն բրիտանական քաղաքականությունն անկախ չէ իրենից: Սակայն բրիտանական քաղաքականությունն անկախ չէ իրենից: Սակայն բրիտանական քաղաքականությունն անկախ չէ իրենից:

Իսկապես, բրիտանական իմպերիալիստները կարող են ինչ

համառություն անել դեկլարացիա անել, թե Անգլիան մտադիր է վոչ հոգ տանել Ֆրանսական շահերի մասին Պիրենեյան սահմանում, վոչ էլ ապահովել Ֆրանսիայի ունեցած կապերն իր գաղութների հետ: Սակայն այնուամենայնիվ Ֆրանսիայի մեկուսացումն իր գաղութային բանակից նշանակում է դրա հետ մեկտեղ կոնտինենտում Անգլիայի ունեցած փաստական դաշնակցի այնպիսի լուրջ թուլացում, վորն ուղղակի հարվածում է Անգլիային:

Չեմբերլենը կարող է ամենաշիտակ անկեղծությամբ մերթել Չեխոսլովակիային նրա անվտանգությունն ապահովելը՝ ընդդեմ գերմանական հարձակման: Սակայն նա չի կարող վոչ ընչացնել այն փաստը, վոր Ֆրանսիային պատերազմի մեջ քաշելը, կենտրոնական Յեվրոպայում Գերմանիայի կողմից նրա դաշնակցի վրա հարձակում կատարելու հետևանքով, անողորմանիստստիվությունությամբ տանում է դեպի այնպիսի սխոտացիա, վորի ժամանակ Անգլիան չի կարող մի կողմում կանգնած մնալ: Ֆրանս-գերմանական բաղխումը չի կարող չխախտել Դրանս-դերմանական սահմանները: Մինչդեռ Չեմբերլենն էլ չի ժխտում, վոր Անգլիան շահագրգռված է Ֆրանսիայի անվտանգությամբ: Վորովհետև, ինչպես իր ժամանակին արտահայտվել է անգլիական նախկին պրեմյեր Բոլդուինը, Անգլիայի սահմանը Յեվրոպայում անցնում է Հոենոսով:

Անգլիայում այժմ հաճախ մոռանում են, վոր պատերազմ հանուն աշխարհի վերաբաժանման՝ առաջին հերթին նշանակում է սպառնալիք Մեծ Բրիտանիայի ամենահարուստ տիրակալություններին: Փաշիստական կողոպտիչներն արգեն վաղուց են աչք տնկել Մեծ Բրիտանիայի գաղութների վրա Աֆրիկայում, նրա տիրակալությունների և ազդեցության սֆերաների վրա Մերձավոր, Միջին ու Հեռավոր Արևելքում: Անգլիական կոնսերվատորները մտածում են ազդեցություն զիջումներ անելու միջոցով, փոքր պետություններին նրան ի կեր հանձնելու միջոցով հարվածը հեռացնել իրենցից: Սակայն նրանք հակառակ նպատակի յեն հասնում, վորովհետև աջակցելու քաղաքականությունը տանում է դեպի ազդեցությունների անպատժելիության դժադմունքի ուժեղացումը, հետևապես և՛ դեպի առավել լայն զավթողական պլաններ իրադրոծելու ձգտումը:

Հրաժարվելով կուլեկտիվ անվտանգության սկզբունքներից, ժամանակակից պայմաններում կիրառելով բրիտանական իմպեր-



լիալիզմի հին՝ «բաժանիր և տիրիր» կանոնը, անգլիական քաղաքականության ղեկավարներն իրականում միայն թուլացնում են իրենց սեփական դիրքերը: Բրիտանական կոնսերվատորների ներկայիս քաղաքականութունը վերջին հաշիվով յեվրոպական կոնսերվատիւնի վոչ միայն մոտեցնում է դեպի ռազմական կատառորոֆան, այլ հենց միևնույն անդունդն է գլորում նաև Անգլիային իրեն:

### ՊԱՅՔԱՐՆ ԱԳՐԵՍԻԱՅԻ ԴԵՄ ՅԵՎ ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՆ

Յեվրոպայում ստեղծված դրությունը խոսում է բուրժուական դեպրիմատիայի սնանկացման մասին, պատերազմի ուժերի սանձալուծման մասին: Սակայն սրանից ամենևին չի հետևում, վոր պայքարն ագրեսիայի դեմ անհնարին է: Ընդհակառակը, նրա դեմ կարելի չէ և պետք է տանել վճռական պայքար:

Այդ դրութի կարևորագույն ապացույցներից մեկը հանդիսանում է այն դիրքը, վորը վերջին դեպքերի կապակցությամբ զբաղել է խորհրդային Միությունը: Այս դիրքն արտահայտված էր այն հայտարարության մեջ, վոր արել էր ընկեր Լիտվինովը 1938 թ. մարտի 17-ին մամուլի ներկայացուցիչներին: Այդ հայտարարության մեջ մասնավորապես ասվում է.

«Ներկայիս միջազգային դրությունը բոլոր խաղաղասեր պետությունների և առանձնապես մեծ տերությունների առջև դնում է Յեվրոպայի ժողովուրդների, և վոչ միայն Յեվրոպայի, հետագա բախտի նկատմամբ նրանց պատասխանատվության հարցը: Խորհրդային կառավարությունը՝ դիտակցելով այդ պատասխանատվության մեջ ունեցած իր բաժինը, դիտակցելով նաև իր այն պարտականությունները, վոր բխում են Լիգայի կանոնադրությունից, Բրիտան—Կելլոգի պակտից և Ֆրանսիայի ու Չեխոսլովակիայի հետ՝ փոխադարձ ոգնության մասին նրա կնքած պայմանագրերից, յես կարող էմ նրա անունից հայտարարել, վոր նա իր կողմից առաջվա նման պատրաստ է մասնակցել այն կոլեկտիվ գործողություններին, վորոնք կորոշվեն նրա հետ միատեղ և վորոնք նպատակ կունենան կանգնեցնել ագրեսիայի հետագա զարգացումը և համաշխարհային նոր սպանդի աճող վտանգի վերացումը:

մը: Խորհրդային կառավարությունը համաձայն է անհպաղ մյուս տերությունների հետ միասին Ազգերի լիգայում կամ նրանից դուրս ձեռնարկել այն պրակտիկ միջոցառումների ըննարկմանը, վոր թելադրում են հանգամանքները: Վաղը կարող է արդեն ուշ լինել, սակայն այսօր դրա ժամանակը դեռևս չի անցել, յեթե բոլոր պետությունները, մասնավորապես մեծ տերությունները, հաստատուն աներկմիտ դիրք կգրավեն խաղաղությունը կոլեկտիվորեն փրկելու պրոբլեմի վերաբերմամբ»<sup>1</sup>:

Յեվրոպայում ագրեսիայի սանձարձակության իրադրության մեջ և Յեվրոպայի բուրժուական ղեկավար կառավարությունների կապիտուլյանտական քաղաքականության պայմաններում Խորհրդային Միությունը նորից ձայն բարձրացրեց հանուն պայքարի ակտիվ ու վճռական քաղաքականության ընդդեմ ագրեսիայի:

Խորհրդային կառավարության հայտարարությունը արտակարգ ուշադրությամբ լսվեց ամբողջ աշխարհում և ամբողջ յերկրագնդի ժողովուրդներին ցույց տվեց, վոր Խորհրդային Միությունը հանդիսանում է վորպես մի հզոր ֆակտոր պատերազմի վտանգի դեմ պայքարելու գործում:

Անգլիական պրեմյեր-մինիստրն իր ճառի մեջ ստիպված էր կանգ առնել Խորհրդային Միության առաջարկի վրա: Նա այդ առաջարկը մերժեց առանց բավականաչափ համոզեցուցիչ պատճառաբանության: Պարոն Չեմբեռլենը հրաժարվում է մասնակցել գործողությունների համաձայնեցմանն «ընդդեմ ինչ—վոր հնարավորության, վորը, սակայն, դեռևս յերևան չի յեկել»: Թեև Չեմբեռլենը մշուշապատ ձևով է արտահայտվել, սակայն դժվար չէ հասկանալ, յես խոսքն ինչի մասին է:

«Հնարավորություն, վորը դեռևս յերևան չի յեկել»,—ըստ Չեմբեռլենի տերմինոլոգիայի,—դա ամբողջ աշխարհի առջև կատարվող ագրեսիայի ակտերն են, ժողովուրդների կամքի վրա քռանալու ակտերը, ոտարների հողը զինված կերպով բռնագրավելը, խաղաղ քաղաքների ռմբակոծումը: Մարդ չկա, վորը չիմանար, վոր նման հնարավորությունն արդեն չարաբաստիկ իրականություն է դարձել: Սակայն բրիտանական պրեմյերը, չնայելով ծանր դասերին, չի կամենում թողնել ագրեսորներին ռժանդակելու դիրքը:

1 Մ. Լիտվինով, Ընդդեմ ագրեսիայի, էջ 62, Քաղհրատ, 1938 թ.:



Բրիտանական կոնսերվատորների նպատակներն ու մտադրու-  
թյուններն արտահայտեց ավելի անկեղծորեն, քան նրանք իրենք  
այդ բանը կցանկանային, անգլիական ռեակցիոն հրապարակա-  
խոս Սկրուտեյտերը իր միջազգային տեսության մեջ «Սենդեյ  
Թայմս» լրագրում (ս. թ. մարտի 20-ին)։ Ձեխոսովակիայի ան-  
վտանգությունն ապահովելու և դրանով հենց կրիտիկական մո-  
մենտում Ֆրանսիային ոգնելու գործում Անգլիայի հրաժարվելը  
հիմնավորելու համար դիմելով վերին աստիճանի անճարակ և  
շփոթ պատճառաբանությունների, Սկրուտեյտերը՝ վորպես վեր-  
ջին փաստարկ հայտարարում է, վոր վերջին հաշվով «ռուսա-  
կան վտանգն ապագայում կարող է դերազանցել դերմանական  
վտանգին»։

Վորչափով նույնիսկ Սկրուտեյտերը չի փորձում պնդել,  
վոր խորհրդային Միությունն ուրիշների հոգերը բռնազրավելու  
կամ ընդհանրապես արտաքին-քաղաքական ագրեսիայի ինչ-ինչ  
սլլաններ ունի, միանգամայն պարզ է, վոր նա վոչ թե «ռու-  
սական վտանգը» նկատի ունի, այլ այն ահագին վտանգը, վոր  
կապիտալիզմի համար ներկայացնում է ինքնին հաղթանակած  
սոցիալիզմի յերկրի գոյությունը։

Վոչ մի կասկած չկա, վոր բրիտանական ռեակցիոններեն ի-  
րենց դասակարգի համար վտանգ են տեսնում վոչ միայն սո-  
ցիալիստական յերկրի գոյության մեջ, այլև ժողովրդական  
Ֆրոնտի գոյության մեջ Յեվրոպայում։ Ժողովրդական Ֆրոնտի  
սլրորելմի լուսաբանությունը չի մտնում ներկա տեսության  
չջանակների մեջ։ Սակայն, կարևոր է ընդգծել, վոր բրիտանա-  
կան կոնսերվատորների քաղաքականությունը և Ֆրանսական  
ռեակցիայի դավաճանական մանյովրները միջազգային քաղաքա-  
կանության հարցերում չեն կարող հասկացվել առանց հաշվի  
առնելու այն փաստը, վոր մասսաների հակաֆաշիստական շար-  
ժումն առաջ է բերում բրիտանական ու ֆրանսական ռեակցիո-  
ներների վախն ու ատելությունը վոչ ավելի պակաս չափով,  
քան դերմանական ու իտալական ֆաշիստներին։

Ժողովրդական Ֆրոնտը—դա պայքարն է ընդդեմ ֆաշիզմի,  
ընդդեմ ռեակցիայի։ Ժողովրդական Ֆրոնտի դրոշների ներքո  
դանազան սլայմաններում ու զանազան ձևերով միավորվում են  
ժողովրդական մասսաներն Իսպանիայում, Ֆրանսիայում և աշ-  
խարհի ուրիշ յերկրներում։ Ժողովրդական Ֆրոնտի լողունդե-  
րը մոտիկ են բոլոր ժողովուրդներին։ Չի կարելի կոպել ֆաշիզ-

մի դեմ, ազգերի ճնշման դեմ, պատերազմի դեմ, չհնվելով  
մասսաների կամքի վրա, վոր արտացոլված է ժողովրդական  
Ֆրոնտի մեջ։ Սակայն խոշոր կապիտալիստական կլիկաները  
մասսաների շարժումից վախենում են, ինչպես Ժանտախտից։  
Ժողովրդական մասսաների ակտիվությունը, թեկուզ և անմի-  
ջականորեն ուղղված լինի պատերազմի վտանգի դեմ և ամբող-  
ջապես զուգադիպի այս կամ այն յերկրի ազգային շահերին,  
խոշոր կապիտալի համար ավելի մեծ վտանգ է ներկայացնում,  
քան ֆաշիզմի ամենակատաղի ռազմական ագրեսիան։

Յեվրոպայում տեղի ունեցող մեծագույն տեղաշարժերի եսո-  
խայում, ռազմական ահարկու վտանգի մոմենտին բուրժուազիան  
պատրաստ է դավաճանելու սեփական ժողովրդին, դավաճանե-  
լու իր յերկրի ազգային շահերին հանուն մոնոպոլիստական կա-  
պիտալի նեղ շահամոլ դասակարգային շահերի։ Այստեղից էլ կա-  
պիտուլացիաների բրիտանական քաղաքականությունը և ֆրան-  
սական ռեակցիայի՝ պետական դավաճանության հետ սահմա-  
նակցող ինտրիգները։

Վերջապես, հենց այս գուտ դասակարգային նկատառում-  
ներով են անվում յեվրոպական ռեակցիայի հաշվարկներն այն  
առթիվ, թե ֆաշիստական ագրեսիան կհաջողվի ուղղել դեպի Ա-  
րևելք, ընդդեմ խորհրդային Միության։ Մինչդեռ ներկա մո-  
մենտում Յեվրոպայում ստեղծված դրությունը հղի յե ամենա-  
լուրջ վտանգներով ամենից առաջ արևմտա-յեվրոպական պե-  
տությունների համար։ Ֆաշիստական ագրեսորներն իրենց քա-  
ղաքականության կենտրոնում դրել են սլատերազմի նախապատ-  
րաստումն ընդդեմ խՍՀՄ։ Սակայն նրանք դիտեն խորհրդային  
Միության հզորությունն ու գիտեն, վոր, ի տարբերություն  
բուրժուական յերկրներից, խորհրդային յերկրը գտնվում է  
մշտական մոբիլիզացիոն պատրաստականության մեջ, վոր նա  
ուզած մոմենտին կարող կլինի հակահարված տալ թշնամուն։  
Ուստի և հակառակ ագրեսորների աջակիցների ու հովանավոր-  
ների հույսերի, ֆաշիստական պետությունները հատկապես  
ԽՍՀՄ դեմ պատերազմ նախապատրաստելու նպատակներով ներ-  
կա պայմաններում իրենց հարվածն ուղղում են նրանց դեմ, ու-  
րեք նրանց առջև կապիտուլացիայի յեն յենթարկվում։ ԽՍՀՄ,  
ինչպես հայտնի յե ամբողջ աշխարհին, կապիտուլանտների թվին  
չի պատկանում։

Ֆաշիստական կառավարություններն ագրեսիվ ավանտյու-



բխտական քաղաքականութիւնը և յեւրոպական բուրժուադիայի  
առանձին խմբերի կապիտուլանտական դավաճանական քաղաքա-  
կանութիւնը, վորի շահերին տվյալ մոմէնտում սպառնում է  
Ֆաշիստական ագրեսիան,—այս բոլոր մոմէնտները միասին  
վերջրած թուլացնում են բուրժուական Յեւրոպայի դեմոկրատա-  
կան լազերը:

Այսպիսի սխտուացիան Յեւրոպայում լուրջ դնում է խոր-  
հրդային Միութեան բացառիկ դրութիւնն ու բացառիկ դերը:  
Խորհրդային Միութիւնը միակ յերկիրն է, վորը վարում է խա-  
ղաղութեան հետեւողական և անսխալ քաղաքականութիւն,  
վորը գիտե, թե ինքն ինչ է ցանկանում և ովքեր են իր բարե-  
կամները սահմանի մյուս կողմում: ԽՍՀՄ հետեւից է գնում առ-  
բողջ առաջավոր մարդկութիւնը: Նա հանդես է գալիս վորպէս  
խաղաղութեան զորեղ ֆակտոր, պրոգրեսի ֆակտոր, հաղթանա-  
կի ֆակտոր:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                       | Եջ |
|-------------------------------------------------------|----|
| Լոնդոնից տրված զարկը . . . . .                        | 3  |
| Ինտերվենցիան իսպանիայում . . . . .                    | 9  |
| Ավստրիայի բռնագրավումը . . . . .                      | 16 |
| Մեդալի հակառակ յերեսը . . . . .                       | 23 |
| Ագրեսորների հետագա պլանները . . . . .                 | 29 |
| Կապիտուլացիայի պտուղները . . . . .                    | 34 |
| Պայքարը ագրեսիայի դեմ և յեւրոպական ռեակցիան . . . . . | 40 |







Պարզմ. Ա.Տ.-Մկրտչյան  
Խմբագիր Վ. Փիմաչյան  
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան  
Սրբագրիչ Հ. Մանվելյան  
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

Գլավլիտի լիազոր № 3305, հրատ. № 592

Պատվեր № 123, տիրաժ 7000

Հանձնված է արտադրության 21/VII 1938 թ.

Ստորագրվել է տպագրելու 27/VII 1938 թ.

Գինը 50 կ.

Պետհրատ—քաղաքական գրականության հրատարակչության տպարան  
Յերևան, Ալավերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0202153



ԳԻՆԸ 50 Կ.

1  
2

Е. АЛЕКСАНДРОВ

О ПРОИСХОДИТ В ЕВРОПЕ?

—Издательство

полит. литературы

Ереван, 1938